ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՄԱՄՈՒԼ

ՀԱՆԴԷՍ ԱՄՍԵՕՐԵՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1875

ԱՊՐԻԼ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ
ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ
ԿՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՔ ՀԱՑՈՑ ՄԷՋ
ՏՐԱՄԱԲՕՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՍ ՀԱՅ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ ՎՐԱՑ
ԶՄՈՒՌՆՈՑ ՀԱՑՈՑ ԹԻՒԸ
ԿԻՆԸ
ԱԶԱՏԱՄԻՏ ՌՈՒՍ ՄԸ
ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԸ
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ
ՍԳԱԼԻ ՄԱՀ ՏԻՐԱՄՕՐ
ՄԱՍՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ Ի ԶՄՈՒՌՆԻԱ Ի ՊԱՏԻԻ Ն. Բ. ԿԱԼԼԻՍԻ ԻՇԽԱՆԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՅԼ ԵՒ ԱՅԼ

ԶՄԻՒՌԻՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԹԱԹՈՒԼ

Ե· ՏԱՐԻ 1875 ԱՊՐԻԼ

ԲՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

Ասկէ առաջ համառօտ դաղափար մը տրուած էր թէ ինչ է իրաւունք և պարտիք, բաւեր որ մեր օրերը շատերուն բերանը կ'պտըտին, առանց անոնց իսկ և իսկ նշանակութիւնը խուզարկելու: Այս յօդուածին նպատակը պիտի լինի բացատրել իրաւանց դանազանութիւնը: Արդարև ազգի ազգի իրաւունք կան: Ամէն պարտ իրեն պատկան իրաւունքն ունի, և փոխադարձաբար՝ ամէն իրաւունք պարտ մը կ'ենթադրէ: Էապէս երկու տեսակ են իրաւունքն, բնական կամ նախնական, աջանպէտ կամ պայմանական:*

*Ս. Մամուլ 1873, երես 163:

Առաջիններն ուղղակի մարդուս բնութենէ կ'ծագին, իրեն ընդհանրապէս են և դասակից։ Ամէն ոք կարող է՝ ի կիր ածել ամէն ժամանակ, ամէն տեղ, ամէն պարագայի մէջ, ամենուն դէմ և յանդիման, եւ պէտք չունի իր կամ ուրիշ կողմէ յետկար մը՝ պայմանագիր մը մէջ բերել։ Ա.յս նկատմամբ բացարձակ են։ Ա.յս իրաւունքն ամէն մարդ կ'վայելէ իր կենաց, աղատութեան, արժանութեան (dignité) պատուոյ և այլն վերաբերութեամբ։

Պայմանական իրաւունքն անմիջապէս մարդուս բնութենէ չեն ծագիր, այլ դործադրութեան մը վրայ հիմնեալ են։ Կրնան ստացուիլ կամ կորսուիլ այլև այլ պարագաներու մէջ. յատկապէս մարդկային դործունեութեամբը կ'ստացուին. անոնց ծնունդ առնելը սակայնանը լուկ անհատ մը կամ ուրիշ քանի մ'անձեր կրնան մէջ բերել։ Սակայն դարձեալ պայմանական իրաւունքն միշտ նախնական իրաւունքի մը հիմնաւորութեան ձևերն են։ Ա.յսպէս սեպհականութեան իրաւունքն դործադրութենէ մը կրնայ ծագիլ, այսինքն նախաբնակութենէ (première occupation) կամ աշխատութենէ. բայց ըստ ինքեան նախնական իրաւունք մ'է որ մարդկային անձնականութենէ կ'ծագի, թէև ստացման եղանակները այլազան են ու տարբեր։ Նոյնպէս՝ ածանցեալ իրաւունքն՝ որ պայմանագրէ մը յառաջ կ'դան նախնական իրաւունքին՝ պարագայից կամ անձերու վերաբերութեամբ դործադրութիւնն է, և դաշնագիրներու միջոցաւ հաստատուած պահանջմունք և պարտք՝ դատաստանի առջև վաւերական կ'սեպուին միայն երբոր նախնական իրաւանց համաձայն են։ Հետևապէս դաշնադրերը չեն կարող երբէք արտադրել կամ ջնջել բնական իրաւունք մը։ Օրինակի համար՝ ոչ ոք կարող է դաշամբ պարտաւորիլ կերպ դառնալու՝ իր աղատութենէ հրաժարելով։

Հետևապէս մարդուս բնական իրաւունքն անվաճառելի և անսնօրինելի են, մարդկային բնութեան բնակից լինելով անհատներու քմահաճ կամքէն և արտադրութիւններէն վեր՝ ի վեր են. չեն կարող կորնչիլ մարդուս դործով և ոչ իսկ յանցանքով. այս իրաւունքը կրնայ դադրիլ կամ սահմանուիլ պատժով՝ բայց պատիժն ալ յատկենական չկրնար լինիլ։*

*
* *

Արդ՝ բնական իրաւունքն դլխաւորապէս հինդ հատ են, այսինքն՝ անհատական աղատութիւն, պատուոյ իրաւունք, պաշտամանն իրա-

ունք, կրթութեան աղատութիւն և իւրացնելու իրաւունք: Զկայ ուրիշ բնական իրաւունք մ'որ այս իրաւանց մէկուն մէջ չմտնէ:

ա) Ընկերութեան մէջ մարդուս առաջին իրաւունքն է իր անձին տէրը լինելը: Անհատական ազատութիւնն ինքնին իրաւունք մ'է, և միւս իրաւանց գործածութեան պայմանը: Առանց այս ազատութեան միւս բոլոր իրաւունքն նշանակութիւն չունին, վասն զի անհատական ազատութիւնը պրաւել՝ մարդկային բոլոր կարողութիւնները պրաւել է:

Բայց անհատական ազատութիւնը բազմագիմի իրաւունք մ'է: Մարդս նախ իրաւունք ունի ապրելու, և այս պատճառաւ ամէն ազգաց օրինագիրն մարդասպանութիւնը կ'պատժէ: Նոյնպէս իրաւունք ունի անվթար պահելի իր անձը կազմող բոլոր գործարաններն. 'ի վերջ իրաւունք ունի ազատօրէն շարժիլ, և այս կարողութիւնն է որ յատկապէս օրինաց մէջ անհատական իրաւունք կ'կոչուի:

Ապրելու, և ամէն յարձակումէ ղերծ ապրելու իրաւունքն 'ի բնութեա անսահման է: Ամէն վայրկեան այս իրաւունքն կ'գործադրուի: Երբեմն ընկերական արդարութիւնը զայն կ'բառնայ, վասն զի մահուան պատիժը տակաւին ամէն օրինաց մէջ գրաւած է, բայց մահը պատիժ մ'է, և չկրնար սահմանել անհատին իրաւունքն, ինչպէս որ բանտարկութեան պատիժը չսահմաներ բուն անհատական ազատութիւնն, և առգանաց պատիժը՝ սեպհականութեան իրաւունքը: Ապրելու իրաւունքն՝ ազգայ քաղաքակրթութեան վիճակին համեմատ կը յարդուի. նոյնպէս առևտուր կամ նաւագոպահովութեան մէջ կ'գտնուի ըստ տեղւոյ և պարագայից:*

Սակայն կան պարագաներ որ կենաց իրաւունքը կ'բռնաբարեն: Այս իրաւունքը կ'պահանջէ որ մարդս իր կենաց վնաս չբերէ, նոյնպէս տէրութիւնն զայն պահպանէ թշնամական յարձակմանց և բնական վտանգներու դէմ: Տէրութիւնը պարտաւոր է հսկել որ յորդութիւններ, համաճարակ հիւանդութիւններ, երաշտութիւն, սով և այլն չպատահին: Մարդս իր կենաց դէմ մեղանչելով՝ շմարիտ իրաւունք մը կ'բռնաբարէ, արդարութեան դէմ կ'գործէ, ինչպէս անձնասպանութեամբ:

բ) Արժանութիւնն մարդուս անձնականութեան էական արժէքն է, որու աղբիւրն իր բանականութեան մէջ կ'գտնուի, մինչդեռ գո-

*ԹՈՒՐՍԼԻՆ. Իրաւանց սկզբունք:

պէտ՝ փոխանակ մարդկային բնութենէ ծագելու, իր բարոյական ըն-
թացքէն, իր գործերէն կ՚ծագի և դիտակցութենն (խղճէն) գայն կը
հաստատէ։ «Մարդս կրնայ պատիւ ունենալ, կ՚ըսէ Ահրէնս, Աս-
տուծոյ, մարդկան և իր յատուկ խղճին առջև։ Կարելի է որ հաստա-
տակայ կարծիքն մարդու մ՚ընթացքէն վրայ սխալի, էական կէտն այս
է որ ամէն մարդ պահէ պատիւն Աստուծոյ և իր խղճին առջև։ Այս-
պէս ներքին և արտաքին իրաւունք մը կայ. մին միւսին հիմն է, և ի-
րաւունքն՝ որչափ որ արտաքին պատուոյն կ՚պատկանի, պէտք է որ ա-
նոր աղբիւրէն դիմէ։ Այսպէս ամէն մարդ պատուաւոր և պարկեշտ
պիտի համարուի երբոր իր գործերն հակառակը չհաստատեն։

Պատիւն՝ մարդկային կենցաղ դլխաւոր վիճակներուն համեմատ՝ կը
զանազանի։ Նախ ընդհանուր պատիւ մը կայ որ ամէն մարդու կ՚պատ-
կանի, վասն զի որչափ վատթարացած լինի մարդ՝ ոչ միայն կրնայ վե-
րականդնիլ, այլև չէ կարող՝ քանի մը մանաւանդ գործերով, կորուսեալ
բոլորովին պատիւը։ Ասկից զատ՝ մարդկանց զանազան դասերու հա-
մար պատիւ մը կայ։ Անհատի պատիւն, մարդու և կնկան, ընտա-
նեաց պատիւ, ազգի պատիւ. ասկից զատ ամէն քաղաքական և ընկե-
րական պաշտօններու համար պատիւ մը։

Պարտ է ամենուն պատիւը յարգել և անոր դէմ չգործել։ Մարդկա-
յին պատիւը կրնայ վիրաւորուիլ լեզուով, գրուածքով, նշաններով
կամ իրական գործերով։ Ոչ ոք իրաւունք ունի ուրիշին պատուոյն դէմ
յարձակիլ և օրէնքը կ՚պատժէ նախատինքն ու անուանարկութենն՝
երբոր իրև այն կ՚ասպարեզուին։ Սակայն մեծ տարբերութիւն կայ
զրպարտութեան և ամբաստանութեան մէջ. առաջինը դատապարտելի
է, իրաւ, բայց երբ վերջինն հիմնաւոր փաստերու վրայ կը թնեղուի
չշմարտութենն մ՚երևան կ՚հանէ, հասարակութեան աչքի օգուտ ու-
նի քան ընդս, թէև ամբաստանութեան առարկայն կրնայ բարոյապէս
վիրաւորուիլ և բողոքել։

ֆ) Մարդս իրաւունք ունի ազատօրէն պաշտել զԱստուած ընկերու-
թեան մէջ. իրաւունք մը ըլլր ամէն ժամանակ պահանջած է ամէն
բռնութեան դիմադրելով։ Նա պէտք ունի հաւատալու, առ՚ի չգոյէ
կատարեալ դիտութեան։ Արդ՝ այս հաւատն Աստուծոյ վրայ կ՚դնէ, և
զանի կ՚պաշտէ։ Սակայն պաշտամանն աղատութենն պարզապէս զԱս-
ծուած պաշտելու կարողութենը չէ։ Մարդիկ առ հասարակ չեն կա-
րող ըմբռնել կրօն՝ առանց վարդապետութեանց և խորհրդոց, և ոչ
վարդապետութիւններն՝ առանց արտաքին յարարողութեանց։ Զգալի

նշաններու կ'կարօտին : Հաւատալու և աղօթելու հարկէն կ'ծնի այս հաւատն ու աղօթքը նշաններով բացատրելու պարտքն ու իրաւունքը : Ուրեմն ժողովրդեան համար պատուած երկնել, անոր խորհրդոյ հաւատալ, անոր պաշտօն մը նուիրել մի և նոյն պարծողութիւններն են : Արդ՝ պաշտամանի հարկը մի անդամ հաստատելէն ետև՝ պարտ է հետեւցընել որ ամէն արտաքին արարողութիւնները յարգելի են : Սակայն ամէն մարդիկ նոյն կրօնը չեն դաւանիր, թէև ամէն մարդիկ կրօնի պէտք ունին : Պաշտամանի ազատութիւնն բարիք ընելու ազատութեան պէս պիտի լինի, ազատութիւն մ'որ ամէն մարդոյ համար նոյնն է : Եթէ այսպէս ներկայի խնդիրը՝ պէտք է ըսել. քանի որ Ճշմարտութիւնը մի է, ուրեմն Ճշմարիտ կրօնն ալ մի է, և միւս կրօնները պէտք է ջնջել : Բայց ո՞րն է Ճշմարիտ կրօնն : Ահա ասկից ծագում առած է կրօնական անհոգւոտութիւնն և աստուածապետական իշխանութիւնը, ամէն կրօնական հիմնարկութեանց մէջ : Վասն զի ամէնքը կ'պնդեն թէ իրենց կրօնն է Ճշմարիտն և թէ Ճշմարտութեան յաղթանակն բուռն ջրոյթեամբ կ'ապահովի : Բայց այսպէս խորհողներն բանականութիւն և զգայումի բարիքն հետ կ'շփոթեն, բանականութիւնը կը դատէ բարոյական բարիքն ու չարիքը, մինչդեռ զգայումն միայն կատարում ունին կրօնական պարտիքը : Մարդս աղատ չլինիր երբ կ'բռնադատուի կրօն մ'ընդունելու ; վասն զի կրօնական Ճշմարտութիւնը, ուր որ գտնուի, կ'զգայուի քան կ'ապացուցուի, և եթէ իրաւն ու բարին ամէն մարդոյ համար նոյնն են, վասն զի բանականութիւնն այսպէս կ'վճռէ, ընդ հակառակն՝ Ճշմարիտ կրօնն տարբեր կ'երևի, իրեն աղբիւրն ունենալով սիրտը : Ուրեմն ամէն անդամ որ վհատութ մը կամ կառավարութիւն մ'իր չհատանած կրօնն պէտ կ'դնէ և անոր պաշտամանն արարողութիւնները կ'արդիլէ, մի միայն իր կրօնները կատարել տալով՝ բռնութիւն կ'գործէ : Իրաւունքն ազատութիւնն է, և ազատութիւնն Եկեղեցւոյ և Պետութեան փոխադարձ անկախութեան մէջ կ'կայանայ . . . :

դ) Ընկերութեան մէջ մարդս իրաւունք և ազատութիւն ունի յայտնել իր գաղափարները տպագրութեամբ, խօսքով, և ուրիշ որև է հրատարակութեան միջոցաւ բացատրել :

Ազատօրէն ուսումնասիրելու կարողութիւնն իրաւունք մ'է, զի ուսուցչութիւնն պարտ մ'է : Մարդ իր մտածութիւնն հաղորդելու պէտքը կ'զգայ, և այս պիտոյքն պարտաւորութիւն մը կատարելու չափ սահմանադրական է : Կ'զգայ որ իրեն համար Ճշմարտութիւնը պահելն ուրի-

չին միտքը Ճնշելու չափ ոճիր մ'է: Ամէն տեղ, ամէն ժամանակ մարդ նախ խօսքով, ապա գրով և հետզհետէ աւելի կատարուն միջոցներով ուսուցանելու ձեռնարկած է: Առաջին ուսուցչութիւնն հայրական է. մարդս հրապարակի վրայ կ'ուսուցնէ, ուսուցնելու կ'սկսի երբ խօսելու կ'սկսի: Ծողովուրդները միշտ երախտապարտ եղած են անոնց որ ուսուցանելու պարան արժանապէս կատարած են:

Ուսուցչութեան ազատութիւնն ինքնին՝ բոլոր միւս իրաւանց դրծադրութեան հետ կ'համաձայնի լիովին: Խօսքով, մամլով կամ ուրիշ հրատարակութեամբ այս այն բարոյական, քաղաքական կամ կրօնական վարդապետութիւն մը կ'դաւանիմ, և այս ընելով ուրիշին իրաւանց վնաս մը չեմ բերեր: Թերևս իմ դաղափարներս ուրիշ կարծեաց հակառակին, բայց եթէ ընդհանրապէս ընդունուած կարծեաց դէմ ելլեն անպամ՝ դարձեալ ուրիշին իրաւունքը բռնաբարած չեմ լինիր: Այս իրաւունքն ոչ ոք կ'ժխտէ: Մինչև ևր կ'տարածուի այս իրաւունքը, մինչև այն տեղը պարսը կ'դադրի, վասն զի թէ այս և թէ ուրիշ խնդիրներու մասին՝ պարան իրաւունքի չափն է:

Սակայն այս ազատութեան դէմ կառավարութիւնները խոչընդոտներ կ'հանեն: Գրաքննութիւնն, այսինքն կանխակալ արտօնութիւնն խօսելու, տպելու, հրատարակելու համար, իրաւունքի ուրացութիւնն է. իրաւունք մ'որ ուրիշին հաճոյից համեմատ կ'գործադրուի, եթէ այս ուրիշն կառավարութիւնն իսկ լինի, իրաւունք մը չէ. պէտք է բառը փոխել, և թոյլտուութիւն ըսել:

ե) Ի վերջէ ուրիշ բնական իրաւունք մը կայ որ է իրացուցնելու իրաւունքն: Արտաքին աշխարհին առարկաներն իր նիւթական կենաց յատկացընելու ազատութիւնն, մարդուս կաղմութենէ կ'ծագի, ինչպէս միւս իրաւունքն: Մարդս պարտաւոր է իր նիւթական կենաց պիտոյքը հոգալ, և եթէ երկիրն իր բոլոր պարունակած բաներովն մարդուն տրուած է, իր գոյութեան համար նիւթական իրերն իւրացընելն անժխտելի, աւելի նուիրական իրաւունք մ'է քան բոլոր միւս իրաւունքն: Բայց իւրացընելն և սեպհականութիւնը տարբեր բաներ են: Առաջնոյն իրաւունքը բնական է, երկրորդինը պայմանական. նիւթական իրաց իւրացումն ազատութեան մէկ յայտնութիւնն է, սեպհականութիւնն անոր մէկ արդիւնքը: Աշխատութիւնն՝ որով մարդս կ'տիրանայ արտաքին իրաց, նոյն իրաւունքէն կ'բղխի:*

*ԹԻՒՐՍԱԼԻՆ. Սկզբունք իրաւանց:

ՄԵԾՆ ՊԵՏՐՈՍ*

Ռուսիոյ ժողովուրդն այն ժամանակ բոլորովին բարբարոս, կուշտ և տգէտ էր։ Եկեղեցական, աղնուական և շինական բարուց ու վարուց կողմէ իրարմէ չէին տարբերեր։ Իրեւ դիտուն կ'համարուէր այն որ դնտահներով հաշուել գիտէր. հազիւ ուրեմն կարգալ գիտէին քահանաները. գինեմոլութիւնը սովորական ախտ մ'էր։ Ուստի Մեծն Պետրոս այս տգիտութիւնը ջնջելու միջոցները մտածեց. և ասոր համար միահեծան իշխանութիւն մը վարել հարկ եղաւ։ Այս իրաւ է որ սարկական սովորութիւնն բնածին էր Ռուսաստանի մէջ. որդին հօրը գերին է, կինն՝ ամուսնոյն, գեղացիք՝ տիրոջ։ Ժողովուրդն թշուառ, կարծէր թէ արքայութիւնն իրեն համար չէր, այլ ազնուականաց և իշխանաց համար։ Սակայն եթէ ազնուական և իշխան գողութիւն ընէին, փողոցներու մէջ դահակոծ կ'լինէին, այս յանցանքը կամ պատիժը նուաստութիւն մը չէր սեպուեր. շնորհակալ կ'լինէին Ձարէն եթէ՝ հանգէսներու մէջ՝ զուարճանալու համար հաճէր գլիրինք ծեծել կամ հաշմել։ Թէև ազնուականներն անարժան՝ մեծ մեծ պահանջում ներ ունէին։ Պետրոս հին Մոսկովիներու ներգործութենէ հեռանալու համար էր որ Մոսկուայէն աթոռը Բեթրզպուրգ փոխադրեց։ Աւատական դրութիւնը ջնջելու համար դահճին տապարը գործածեց։ Ժողովուրդը տասն չորս դաս բաժնեց. իւրաքանչիւրն իր յատուկ արտօնութիւններն ունէր որ գինուորական աստիճաններուն կ'համապատասխանէին։ Պետրոս ոչ միայն միապետ այլ քահանայապետ էր. ինք կարգադրեց բոլոր կրօնական իրերը, և կղերին զօրութիւնը չափաղանց տկարացուց։ Բոլոր վանօրէից յուցակը շինել տուաւ, և հրամայեց որ առանց հրամանի ոչ ոք վանք հիմնէ։ Քահանաները ստիպեց որ իրենց որդիքը դպրոց գրկեն, և քահանայութեան պայմաններն որոշեց։ Պատրիարքական իշխանութիւնը ջնջեց, և երբ ոմանք ոյն նորութեան դէմ ելան, իր կուրծքը զարկաւ ըսելով. Ա—ասկէ չեր Պապրիարքը։ Միայն սինհոդոս մը հաստատեց, որու մէջ ամէն կարգի եկեղեցականներ կային, և որ պաշտօն ունէր կրօնի և հասարակաց կրթութեան վրայ

*Տե՛ս երես **106**։

հսկել և կրօնական խնդիրները վճռել։ Սիւնհոդոսին անդամոյ թիւն որոշ չէ. կրնան նաև աշխարհական լինիլ, և ասոնցմէ մին, փոխանորդի (procureur) միջոցով՝ Ձարը կ'ներկայացընէ, և վերջի իրաւունք ունի։

Երկարատև ստրկութենէ անբանացած ժողովուրդն՝ բռնակալի մը պէտք ունէր որպէս զի մեծ դործերու ձեռնարկէ. այս բռնակալն եղաւ Պետրոս, որ բնութեամբ, դաստիարակութեամբ, իր հանճարին դերազանցութեամբը, և թերևս՝ ի հարկէ ստիպեալ՝ բռնապետ մ'էր, որ ազդային նախապաշարումներն առ ոտն կ'կոխէր։ Ռուսք՝ որ առ ահի կ'հպատակէին Մեծին Պետրոսի բոլոր կարդադրութեանց՝ անհնարին զայրացան երբ հրամայեց որ իրենց մօրուքը կտրեն. այս զայրոյթն անհատական իրաւանց դէմ եղած բռնաբարութեան արդիւնք չէր այլ աւելորդապաշտութեան, վասն զի Ռուսք կարծէին թէ իրենց պաշտպան սուրբ Նիկողայոս ղիրենք չպիտի ճանչէ եթէ իրենց մօրուսը կտրեն։ Պէտք եղաւ նաև ազդային երկայն հադուստը թողուլ արքունիքն ընդունելու համար։ Պետրոս հրամայեց որ տարին չէ թէ սեպտեմբերի 1ԷՆ այլ յունվար ամսէն սկսին, և այս բանս իր հպատակաց՝ արարչագործութեան կարգին մէկ խանդարումն երևցաւ, վասն զի կարծէին թէ Աստուած աշխարհս աշնան մէջ ստեղծեց։ Պետրոս քաջ դիտէր որ Ռուսք օտարականները կ'ատէին, և իրեև անբարիշտ և անաստուած կ'նկատէին, և սակայն ստիպեց որ իրենց զաւակներն այս օտարականներուն ղրկեն կրթութեան համար։ Վերջապէս՝ երբ Պետրոս բան մը միտքը դնէր և այս բանս ընդհանուր աղէտին օգտակար համարէր, ամէն միջոց՝ի դործ կ'դնէր իր նպատակին հասնելու համար։ Հաղարաւոր դլուխներ կ'կարէր, վասն զի կարծէր թէ բարիք մ'է անմբռնաւ հպատակներ ունենալը. որովհետև Եւրոպուրիի հիմնարկութենէն իրեն բարիք մը կ'երևի, անհամար մարդիկ կ'զոհէ անոր շինութեան համար, այս և Թաւանրոկ քաղաքը կ'շէնցընէ բազմաթիւ ընտանիքներ իրենց բնիկ երկրէն փոխադրելով և հազարաւոր մղոն հեռու տեղեր ուղարկելով ուր վաստակաբեկ կ'կորչէին։ Արդարև Մեծն Պետրոս՝ Ռուսաստանի քաղաքակրթութենէն վեր՝ի վայր դարձուց բոլորովին նոր թաւական քաղաքակրթութիւն մը մուծանելով, այսինքն միայն արուեստներն և Ճարտարութիւնը ծաղկեցընելու չհանալով, սակայն իր ժողովուրդը դեռ խակ էր այս չափազանց վերանորոգութեան։ Հարկ էր նախ սկսիլ անոր սիրտը շինել, անոր իրաւանց և պարտուց դաղափարը տալ, և ժողովրդեան ոգւոյն և պատ-

մութեան վրայ հիմներով ընկերական հիմնարկութիւններ, քայլ առ քայլ: Պետրոս իր աղյը չափազանց արհամարհելուն* միտքը դրաւ զայն ուղղել՝ չէ թէ բնական և պատմական տարրերով, այլ բռնադատելով որ օտար օրինաձևերու համեմատ կազմուի, որպէս թէ Գալիմանեան գլուխներն դաղղիական սիսլաբներու կ'ուզէր վերածել: Հետևաբար օտարոտի մշակութեան լոկ արտաքին ձևերն փոխադրեց Ռուսաստան, և այս ալ միայն բարձր դասուն մէջ: Գերմանական սովորութիւնները՝ որ նուաղ նուրբ են, ընդ հակառակն ժողովրդեան մէջ տարածուեցան, և այս է պատճառն Զարին և ազնուականաց մէջ մինչ ցարդ դանուած մեծ հեռաւորութիւնը: Շատ մարդիկ այս այլափոխութիւնն ազգայնութեան նախատինք սեպեցին: Մարդկային արժանապատուութիւն և ոչ հիմնարկութեան մը մէջ երևցաւ, և ամբոխն՝ որ ազգայ կենսական ոյժն է, քաղաքակրթութեան հիմնական տարրէն զուրկ մնաց:

Բայց դարձեալ Մեծն Պետրոս հսկայական գործ մը կատարեց. իր ամէն պակասութիւններովն հանդերձ եզական մարդ մ'է պատմութեան մէջ: Իր ձեռակերտն է այն ռուսական պետութիւնն որու իշխանութիւնն արևելքի կողմէ կ'տարածուի շարունակ և արևմտեան կողմէն Եւրոպայի կ'սպառնայ: Որպէս զի իր գործն իրեն հետ չկորնչի, Մեծն Պետրոս իր յաջորդներուն համար տեսակ մը քաղաքական կտակ թողուց: Այս կտակին գլխաւոր տրամադրութիւններն ասոնք են. — Ամէն միջոց՝ի գործ դնել Ռուսաց եւրոպական ձևեր և սովորութիւններ տալու. միշտ պատերազմի վիճակի մէջ գտնուիլ. ամէն կերպով Սև և Պալթիկ ծովուց կողմերը տարածուիլ, ստիպել Աւստրիան որ Թուրքերն Եւրոպայէն վանէ, և այս պատրուակաւ մնայուն բանակ մը պահէ. Սև ծովուն վրայ նաւահանգիստներ հիմնել, և դէպ՝ի Կոստանդնուպոլիս յառաջանալ. սերտիւ կապուած մնալ Անգլիոյ հետ, որ սիրոյ նպաստէ ռուսական նաւատորմին կատարելագործութեան, և անոր սիրոյ օգնէ Պալթիկի և Սև ծովու վրայ տիրելու, համոզուիլ որ Հնդկաստանի վաճառականութիւնն աշխարհի վաճառականութիւնն է, և ով որ անոր տիրանայ Եւրոպայի կ'տիրանայ. Եւրոպայի կռիւներուն խառնուիլ, մանաւանդ Գերմանիոյ, Անգլիոյ, Տանիմարգայի և Պրանդէնպուրկի նախանձը գրգռել Շուէտի դէմ և Լեհաստանի մէջ անիշխանութիւնն մինչև որ ինն ու միւսը նուաճին,

*Ս. ՔԱՆԴԻՒ. Տիեզերական պատմութիւն:

հիւրասիրող Յունաց կրօնական ղեկավարին օգուտ քաղել, որոնք Հունգարիոյ, Թուրքիոյ, Հարաւային Լեհաստանի մէջ ցրուած են, Ֆրանսայի և Վիէննայի արքունիքն իրարու դէմ դրգռել, և անոնց փոխադարձ տկարութենէ օգտիլ ամէն ինչ շահելու համար»:

Ինչպէս որ կ'երևի, այս կտակին մեծ մասը պատմութիւնն արդէն ատած է: Մեծին Պետրոսի հաշիւներն մեծ մասամբ ծուռ ելան: Անիլիա տակ չէ Ռուսիոյ հետ, Պրանտենպուրգի Վերմանական ահագին պետութիւն մը դարձած է, Թուրքիա Եւրոպական տէրութեանց շրջանին մէջ անցնելով իր անկախութիւնն և ամբողջութիւնն զանազան դաշնադրութեամբք ապահոված է, Յոյնք այսուհետև Ռուսաստանի քաղաքականութեան գործիք լինելու տրամադիր չեն երևիր: Միայն Լեհաստանի, Շուէտի և Հնդկաստանի նկատմամբ Մեծին Պետրոսի կամքը կիստվին կատարուած են և հետզհետէ կատարուելու վիճակի մէջ կ'դնուին:

ԴՐԹՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՔ ՀԱՑՈՑ ՄԷՋ

Ե

Եթէ մեծ մարդիկ այսպէս վարուած են լուսաւոր աշխարհիս տակ, մինչ փոքր մարդիկ՝ փոքր և անլոյս շրջանի մը մէջ՝ մեծ զգուշութեամբ վարուելու պարտաւոր ենք: Ուստի իմ մասիս չեմ սրտմտիր երբ ի՛նձնեմ որ բարոյական ճշմարտութիւնները շատ դիւրաւ ընդունելութիւն չեն գտներ: Սիրտն այնչափ շուտով չբաժնուիր իր սիրական կուռց պաշտամունքէն, որչափ միտքն իր նախապաշարումէն՝ դիտութեան իրական փորձերու առջև: Մէկ կողմէ առաջինները կ'պահենք իրրև հնութեան նուիրական մասունք, միւս կողմէ կույր կ'ձևանանք մեր բոլորտիքը փորձառութեան ըրած աւերումներուն: Ա՛յսօր իրենց բոլոր էութեան հիմը կրօնական սկզբունքը կ'դաւանին Հայք, և ես առ հարկի նոյն դաւանութեան կ'հակիմ, բայց ինձ կրնայ ապացուցանել որ եթէ այս սկզբունքը մեղ պահեց յաւտ. ըսած մասին, պիտի պահպանէ և այսուհետև այն փորձառական դասերուն դէմ որ ամէն հինուին դրութիւններ, նոյն

ֆակ մինչև վերջին ատեններս անդրդուելի համարուած Ճշմարտութիւններ կ'աւլէ կ'տանի։ Ժամանակին հետ աղերն իրենց պահպանութեան սարքերը փոխած են, ինչ որ երբեմն հզօր զէնք մ'էր, այսօր անպէտ գործի մ'է։ Հայը կ'փոխէ իր վարքը բարքը, շուտով կ'ընդունի իր բոլորաքիրը դանուղ ազգութեանց բնաւորութիւնը, նորաձեւութիւններն ու արտաքին կերպերը, սակայն չուզեր կամ չկրնար հետամուտ լինիլ այս մնայնի և բարոյական յեղափոխութեանց պատճառներուն որ օր ըստ օրէ նոր հոգւով, նոր մեքենաներով, նոր արուեստներով աշխարհ մը կ'ծնին։ Սրտով չինական մնայուն, միջնադարեան ունակութիւն ունի Հայն, մինչդեռ ներքսապրանքով՝ բաղմազգին քամելեօն մ'է։ Իր հոգին, իր սիրտն հնութեան ամպերուն մէջ կ'թաղէ, մարմինը միայն նորութեան յանձնելով։ Կէս Ասիացի, կէս Եւրոպացի, իսկ մարդը, նոր մարդն ինք է։ Այս նոր մարդն իր դպրոցներէն, իր եկեղեցիէն պիտի ելնէ, բայց արի տես որ այդ դպրոցներն նոյն հին դրութեան մէջ կ'թաւալին և առաջ եկած պատուղներն չհասած կ'օրպնոտին, այդ եկեղեցին դեռ իր հոգւոյն արժանի հոգիները կ'հալածէ և լոյսը գրասենեակներէ կ'պահէ։ Կրծուն որդերն, գրասեան մեր հին ուսուցման եղանակներն են, մեր կրթութեան վատ միջոցներն են, որ այժմ անուն չունին Եւրոպայի շատ երկիրներու մէջ։

Այս կարգէն են և մեր բարոյական ու կրօնական դաստիարակութեան ձևերն ու դասերը, որով մանուկը մեքենայ մը, չնչաւոր գործիք մը կ'դառնայ և առանց դատողութեան, առանց բանաւարութեան դուրս կ'թափէ իր վարժեալն ուսածը։ Այս ուսմունքն հաստատատիպ է, գրեթէ գար կ'աւանդուի առանց փոփոխութեան։ «Միջին դարու հազար սարին սպրատ է իր բուն անուամբն պատասխան կոչել» կ'ըսէ ուշիմ հեղինակ մը։ Այս արտասուաց դարը մեզի համար կ'շարունակուի, կ'յամառինք մանկան ըղեղը թրթռաշնութիւններով, կ'ուզենք որ արհեստաւորին որդին իր տասն տարուան հասակին մէջ աստուածաբան լինի, դերբնադէտ լինի, հայկարան լինի, և սակայն բնութեան, բանականութեան հակառակ ընթացք մ'է այս։

Թերևս առարկուի՝ և իրաւամբ, որ Եւրոպայի մէջ անդամ կրօնական դաստիարակութեան վրայ կարծիքները տարաձայն են։ Մէկ կողմէ եւրևելի մանկավարժներ կ'պահանջեն որ տասնամեայ աշակերտ մը հաւատոյ բոլոր խորհուրդներն լիապէս ուսնի և մեկնէ, միւս կողմէ՝ ուրիշ ծանր գլուխներ կ'պնդեն որ այս պահանջումը բոլորովին անհեթեթ է, և թէ պէտք է մնային մնունդն աշակերտին ընդունակութ

ջեան համեմատ հայթայթել։ Ուստի մեզ Հայոցս ամեն չէ եթէ տա-
կալին հին ընթացքը կ՚շարունակենք։

Այս առարկութիւնը բոլորովին անհիմն չէ, և զայն հաստատելու համար կարող եմ քանի մը վկայութիւններ մէջ բերել, առանց իմ՚նպա-
տակիս շեղած լինելու. վասն զի այս նպատակին բնական, բանաւոր եղա-
նակի մը խուզարկութիւն է։ Արդարև պարոն Թ. Պրօն՝ որ կրթութեան շատ խնդրոյ մէջ ձեռնհաս հեղինակ՝ լուրջ դաղափարներ կ՚արտայայտէ անոր այլ և այլ ձիւղերուն վրայ, իր Ցեսական և գործնական մանկավար-
ժութիւն կարևոր երկասիրութեան մէջ կ՚գրէ՝ կրօնական վարդապետու-
թեանց և խորհրդոց մասին. «Եթէ լոկ բանականութեամբ վարդապե-
տութիւն մ՚ըմբռնել կարելի է, ինչպէս Աստուծոյ դոյութիւնը, ղո-
րութիւնն, իմաստութիւնը, բարութիւնը և այլն՝ մեր երկնային Հայրը կերպով մ՚երկու աչք տուած է մեզ այս վարդապետութեան ճշմարտու-
թիւնը ճանչնալու, այսինքն բանականութեան աչքն ու հաւատոյ աչքը. ուրեմն այս երկու աչքով իրարև իր կամքը կ՚նկատուի այս վարդապե-
տութիւնն և տղաքն ըստ այմ՝ շարժելու պարտինք յորդորել։ Սակայն պէտք է մեծ շրջահայեցութեամբ շարժիլ այս մասին, վասն զի եթէ ամեն բան բանականութեամբ մեկնել ուզենք տղոց, այն ատեն իրենց դատաքննութեան և բանաւորութեան ողին դիւրաւ պիտի դրգուենք և իրենց հաւատը շատ քիչ պիտի արդիւնաւորի։ Նոյն իսկ այն վարդա-
պետութեանց նկատմամբ՝ զոր ըստ մասին բանականութեամբ կարելի է ըմբռնել, երկնային յայտնութիւնն իրրև կոչնաբոյժ պարտ է մէջ բերել տղոց առջև սոյն վարդապետութիւնն ապացուցանելու համար. . . ։ Որչափ փոքր լինին տղաք, այնչափ վարդապետութեանց ճշմար-
տութիւնն հաստատելու համար՝ մի միայն յայտնութիւնն իրրև փաստ մէջ բերել պէտք է. մէկ կողմէ իրենց հաւատալու կարողութիւնն խոս-
յականութենէ աւելի շուտ կ՚զարգանայ, միւս կողմէ այս կարողու-
թիւնն, այսինքն հաւատն՝ վաղահաս և անընդհատ կրթութեան մը կը կարօտի։ Այս կրթութիւնը կարևոր է, վասն զի բանականութեան բոլոր ըղձն բաւական չէ, պէտք է հաւատոյ աչքովնկատել դերբնա-
կան իրերը. . . ։» Դարձեալ Պ. Պրօն՝ խորհրդածելէ տղոց մեկնելու համար՝ կ՚պատուիրէ որ յայտնութիւնը հիմ բռնենք։ «Վասն զի նոյն ինքն Աստուած այսպէս ըսաւ և թէ Աստուած չէ կարող ոչ սխալիլ և ոչ խաբել։ Եւ որպէս զի կասկածներ չծագին տղոց մտքին մէջ, և — Այդ անիմանալի է, այդ ինչպէս ճշմարիտ կրնայ լինիլ — հարցում-
ներով իրենց հաւատը չտկտկանայ, պէտք է անոնց գիտել տալ որ

ընութեան մէջ մի շատ բաներ կան զոր չեն կարող հասկընալ. ասոնք նոյնպէս խորհուրդներ են մեզի համար, և սակայն ասով իրենց օգտակարութիւնը չվնասիր» :

Բայց այս պատերն ու փաստերն, որ նոր չեն և՛ի վաղուց կ՛տրտմեն մեր դպրոցներուն մէջ անդամ, դժուարութիւնը չեն լուծեր : Որչափ բաւ նոյնչափ աստուածաբանական խնդիրներ, այսինքն մեծ մեծ ներ : Կարծես թէ Պ. Պրօն կղերական պաղպաղարներէ ներշնչեալ՝ իր ստուար զործին կրօնական մասն կղերանոցի համար յօրինած է, և քանչ զպալով այս դրութեան տկարութիւնն՝ կ՛յորդորէ բանականութիւնն ըստ ամենայնի արտաքսել կրօնի խնդիրներէ, մանկան դիւրահաւանութիւնը չարաչար զործածել, զանի իբրև անբան էակ վարել և անոր կասկածներուն առաջն առնուլ նոյն իսկ բնութեան զաղտնեաց անխմանալի լինելն իբրև փաստ առարկելով, թէև կ՛մոռնայ որ մանուկն ալ կրնայ առարկել թէ այս բնական զաղտնեաց համար երկնային յայտնութիւն մ՛եղած չէ երբէք, և պիտութիւնը կ՛շատանայ միայն բնական զործողութեան մ՛արգիւնքը հաստատել առանց սկզբնապատճառը զերբնական աշխարհի մը մէջ փնտռելու :

Միւս կողմն Միշլէ՝ թէև այս մասին իր թուղթը սակայ ծայրայեղ, կ՛զրե իր Ուղեւ զործին մէջ. «Եթէ այս ամէն բաներն մեր տղոց կէտ առ կէտ ուսյունէին, շատերն անշուշտ պիտի չհաւատային : Բայց ակնառութիւն մը կայ : Հարք մեծ կարևորութիւն չեն ընծայեր զործին : Եւ նոյն իսկ այն անձն որ ծանրապէս կ՛քարոզէ այս դժուարիմաստ բաներն ոչ այնչափ զանոնք հասկըցնելու կ՛ջանայ, որչափ նորաբոյս հոգին թեքելու, բոլոր նոր սերունդներն լուծի ներքև դնելու : Եթէ տղան բան մը չսորվի, եթէ ստրկապէս կրկնէ բառ առ բառ սորվածը, ինքնին ուրիշ բան չեն պահանջեր :

«Ա՛յս բառերը պիտի մոռնայ. երկու բան պիտի մնայ միայն : Նախ՝ ստրկամտութիւն, ամէն սեռակ իշխանութեան համար լաւ հպատակ պիտի լինի, բռնատուրին ձեռօք մարդեալ : Երկրորդ՝ իր դանկն այս բարբարիկ զործողութեամբ բռնազբօսեալ լինելով, չպիտի խելագար դառնայ, այլ մոքով ապիկար, պոետիկ շաւիղներէ կաղն՝ի կաղ քալելու պիտի վարժի առանց Ճարտարամտութեան, առանց ղօրութեան, առանց հնարագիտութեան :

«Մարդկութեան և արդարութեան, որամաբանութեան և պարզ ուղիղ բանին զէմ մարդ անպատուհաս չմեղանչեր. ինչ կ՛ըսե ուղիղ քանը. թէ մարդկային մշակութիւնն, ամէն մշակութեան պէս, պէտք

է աստիճանաբար կատարել, չէ թէ վարչային բուռն պատահարով, թէ պէտք է նախ պործօն կարողութեանց ազատութիւն տալ, թէ վերջին նկատութիւնն (spéculation) պարտի աւարտել, և չէ թէ սկսիլ։»

Ա յս երկու տարբեր վիճակութիւններէ կ'հետևի արդարև որ նախ Եւրոպայի մէջ երկու իրարու ներհակ հոսքեր կ'փչեն, մին անսխալական կաթոլիկութեան կ'տանի, միւսն բնականութեան. մին՝ հին դարերը, խաբազանն ու ապաշխարական տքնութիւնները նորոգելու կ'աշխատի, միւսն Բէնդալօծ֊ի և Գրօէսկէլի դրութիւնն արդիւնաւորելու. երկրորդ՝ թէև կան շատ բաներ որոց անտեղութիւնը ճանչցուած է, սակայն մարդիկ կամայ ակամայ անոնց կ'յարձն և իբրև անհրաժեշտ պիտոյք ուսմանց կարգը կ'դասեն։ Ուրեմն անիրաւութիւն է պահանջել հայերէն որ անմիջապէս նոր ճանբան մտնեն։ Սակայն պարտիմ դիտել որ մեր եկեղեցին հռոմէական անձուկ և արտաքսիչ ոգին չունենալով՝ աւելի հակամէտ է յառաջադիմութեան հակումները խրախուսելու, թէ իր թոյլտու և լուսաւոր վարդապետութիւններովը կարող է նոր ուսման նոր եղանակներն իր ծոցն ընդունիլ, մանկական բարոյականութեան և պարտուց ճանաչման մէջ մարզել, առաքինի, ժիր, ազատամիտ անդամներ առաջ բերել և հոսկ ուրեմն անոնց բոլոր կարողութիւնները միակերպ նկրտիլ, բանականութեան, սիրոյ և մարդկութեան վայել հրահանգներով։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԻՍ ՀԱՑ ԸՆԹԵՐՑԱՏԱՆ ՎՐԱՑ

Սիքսթ. Զգիտեմ թէ այս ընթերցատունն ուսկից եկաւ, և ինչու այսչափ կարևորութիւն կ'տան անոր։ Ամէն տարի նորա անդամներէն ոմանք կ'գան պլուխս կ'ուտեն և գիս կ'յորդորեն որ բաժանորդ գրուիմ. ես այդպիսի քանէքս֊ստակ չեմ տար կ'ըսեմ կ'ճամբեմ։ Ա յս տարի ևս եկան և գիս զբաղ տեղը համոզել ջանացին թէ ընթերցատունն օգտակար հաստատութիւն մի է. և այս անգամ ևս միջոց մը գտայ, նայինք, շա՜տ ալէկ ըսելով ազատեցայ։

Ես ընթերցատուն՝ ի վաղուց փակուած կ՚կարծէի . . . եղբայր, այսպիսի բաներ մեզի համար չեն . ընթերցատունն ի՞նչ է, մի՛թէ մի քանի տարի առաջ այսպիսի բան ունէի՞նք : Մի՛թէ ես, եթէ երբէք լրագիր կարդալ ուզեմ, տունս չե՞մ կրնար կարդալ, ի՞նչ հարկ ընթերցատունն երթալ . . . նոյնին համար տալիք ստակովս կրնամ այլուր մի քանի ժամ զուարճանալ . . . : Մինչդեռ ընթերցատունն երբ երթամ տաղտուկ կ՚ըլլամ և սիրտս կ՚նեղանայ : Արդ՝ քանի որ մեր տուած դրամին փոխարէնը չենք ընդունիր, ի՞նչ է ընթերցատան օգուտը : Այսօրուան օրս սիրտերը նեղ են, ամէն ոք զուարճութիւն մը կը խնդրէ :

Զաբմայր . Բոլոր խօսակցութիւնդ զուարճանալու միջոցներուն վրայ կ՚դառնայ : Կ՚խոստովանիմ՝ քեզի հետ որ մարդկային բնութիւնը զուարճանալու պէտքն ունի, վասն զի նոյն իսկ զուարճութիւնն մարդուս կենսական պիտոյից մին է, սակայն կան նաև այլօրինակ զուարճութիւններ որ հոգւոյ և մտաց կ՚վերաբերին, և որոնք խիստ կարեւոր են, քանզի անոնք հոգին, սիրտը կ՚զտեն, կ՚մաքրեն, մեր դպրութիւնը կ՚վսեմացընեն և մեզ դէպ՝ ի բարին կ՚առաջնորդեն :

Սմբաթ . Խնդրեմ այդպիսի խրթին էնէյոփեդեական գարձուածներ մի դործածեր . հոբաց Ն ֆռէէ զըաբճուընէն , մեր դպրութեան վախճան և այլն ըսելով չեմ ըմբռներ թէ ի՞նչ ըսել կ՚ուզես . յայտնի ոճով խօսէ որ իմանամ :

Զաբմայր . Ըսածս շատ պարզ է . մարդս մարմնական զուարճութիւններէ զատ՝ հոգւոյ և մտքի զուարճութեան ևս կ՚կարօտի : Ինչպէս մարմինն նիւթականով կ՚սնանի, այսպէս և ոգին բարոյական սննդեան վայելման պէտք ունի : Հոգւոյ զուարճութիւնն կ՚հետևի մտքի մշակութենէ և բարոյական ընտիր դաստիարակութենէ . . . : Դու ընթերցատան օգուտը տակաւին չես ըմբռնած . . . պարտէզ մի է այն լի հազարաւոր հոտաւէտ ծաղիկներով ուր մեղուն նման ամէն ոք իր սիրած ծաղիկները կ՚գտնէ ու կ՚ծծէ : Անդ կ՚յաճախէ հարուստ և աղքատ, վաճառական և խանութպան, արհեստաւոր և գործաւոր : Գիտես արդեօք ինչ օգտակար և բարի ազդեցութիւն կ՚ընեն անդ ժամանակ առ ժամանակ ազգային և ուրիշ օգտակար նիւթերու վրայ տեղի ունեցած բանախօսութիւնները . . . :

Սմբաթ . Աղէկ հանդիսեցայ չըսե՞ս, պարոն : Ես ընթերցատան դէմ դանդատելու ժամանակս՝ դու ամուր գովեստ կ՚ընես ինձ : Ուրեմն դո՛ւ ևս անոնց խելքէն ես . . . տե՛ս անդ յաճախողներն ալ են, ե-

բիւտճարդներ , ուսումնականներ , վարժապետներ , քահանաներ . . . մինչ Գ. Գ. և Պ. Պ. որ հարուստ և խելացի Ճանչցուած են , կը յառաջանէն բնաւ . իսկ բանախօսութիւն , Ճառ ով մոխիկ սիրտ ընէ , շիտակը տեղէս անդամ չեմ շարժիր . բանախօսողներն ոյք են , մինչ մեր Ճանչցած վարժապետները չէն . . . իրենք ինչ կիտեն որ մեղի բան սորվեցնեն . . . աւելի կ'ընտրեմ տուն մնալ և մեծ մօրս առաջ սկիները մոխիկ ընել քան թէ անոնց բանախօսութիւնը . . . :

Զաբմայր . Ներէ որ շարունակեմ խօսքս : Ընթերցատան պիտանութեան վրայ խօսելով դիւրին է երեւակայել որ ամենուն սրտաց չէ , կամ պարզ խօսիմ , ամենուն քսակը չներեր լրագիրներու բաժանորդ դրուիլ , մանաւանդ երբ զանազան լրագիրներ կարդալու փափաքն ունի մէկը , մինչդեռ ընթերցատան անդամ դրուելով և տարեկան փոքրիկ դուռմար մի վճարելով կրնայ ամէն մարդ վայելել ընթերցատան սրահը պտնուած բոլոր լրագիրներն ու հանդէսները : Խորհէ անդամ մի , Պ. Սմբատ , որ մեր Զմիւռնիոյ մէջ կան այնպիսի աղքայիներ որ ամբողջ տարին հայերէն լրագրի երեսն անդամ չեն տեսներ , և թէ աղքային , թէ քաղաքական խնդիրներու վրայ բնաւ տեղեկութիւն չունին : Այսպիսիներու համար առաւիկ ընթերցատունը պեղեցիկ առիթ մ'է շաբթուան մէջ մի քանի իրիկուն յառաջանալ անդ , լրագիրներ կարդալ , բանախօսութիւններ մոխիկ ընել , աղքային և օտար լուրերու և անցքերու , խնդիրներու վրայ ծանօթութիւն ստանալ : Միթէ առանք օղուտներ չէն :

Սմբատ . Տես ինչ բաներ կ'խօսիս . բարեկամ , այսօրուան օրս մոլորուն : Այդ բոլոր ծանկերդ քանի՞ ստակ կ'արժեն : Աղքային լուրերու , խնդիրներու վրայ տեղեկանալով հասարակութիւնն ինչ օղուտ պիտի քաղի . . . եղբայր , այսպէսի բաները մեղի համար չեն . . . :

Զաբմայր . Այդ մասին ես կ'սխալիս , Պ. Սմբատ : Ամէն աղքային անհատ ընկերական ինչ վիճակի իսկ վերաբերի , թէ վաճառական և թէ արհեստաւոր , կ'հարկադրի իւր կարողութեան և ժամանակին հետ բաժին չտի աղքային խնդիրներու հետաքրքիր և ուշադիր լինիլ և տեղեկութեամբ հսկել անոնց վրայ : Այս իր աղքային և քաղաքական իրաւունքն ու պարտքն է : Եղիւկ այն աղքին , որու անհատներն անփոյթ և անտարբեր են , և այս բաներուն յարգը չեն Ճանչեր : Մարդս քաղաքակրթութեան մէջ որչափ յառաջադիմէ , այնչափ ես կ'ծանանչին իւր սրտին մէջ անկախութեան սէրը և բուռն զգացու մի դէպ ի ազատութիւն : Այն ժողովուրդներն որ դատեսարակութեան լոյսն տառա-

ցած չեն, հարկաւ սոցիալիստեան կ'ենթարկին, կ'խոնարհին կ'նուաստանան, քանզի չեն տածեր իւրեանց սրտին մէջ այն վեհ զգացումն որ մարդկութեան դրոշմն է, այն սուր ցնցումն որ քաղաքակրթութեան շնորհն է: Տես Եւրոպիոյ լուսաւորեալ ազգերը: Արդեօք Անգղիա գտուածծ ես երբէք. Հասարակաց խորհրդարանի անդամոց ընտրութեան առթիւ մարդկային իրաւանց և ազատութեան ինչ վեհ տեսարան մի է այն: Բոլոր Բրիտանիոյ մէջ ահագին յուզում և իրար անցում մի տեղի կ'ունենայ. ժողովուրդն իբրև մի անձ ոտք ելած իր վեհապետութիւնն 'ի գործ կ'դնէ: Այն հեղ գործաւորն, զոր տոլորաբար իւր գործիքին զբաղած կ'տեսնէիր, այս ընտրութեանց առթիւ ամէն բան մէկդի կ'թողու, իւր օրական ապրուստը կ'մոռնայ, և իբր ախոյեան առաջ կ'գայ, հասարակաց ասպարէզը կ'ներկայի, իւր քաղաքակիցները կ'քաջալերէ և իւր դաղափարին և համոզման համապատասխանող կուսակցութեան համար իւր քուէն կ'տայ . . . : Այն օրն իր կեանց ամենէն երջանիկ օրն է, և փառասիրութեամբ կ'սպարծի, քանզի նոյն օրն կ'զգայ որ ինքն ազատ քաղաքացի է, ազատ մարդ, ամէն բան կ'զոհէ բայ 'ի այս իրաւունքէն որ իր կեանքն է:

Սոքռատ. Զգիտեմ թէ ինչ տեսակ քարոզ տալու եկար, ընթերցատուն թողեր, ու Անգղիոյ բարքերը գատկեցար . . . մենք հոս . . . անոնք հոս. ապահ քեզի բերբը մեզի համար չեն:

Ջաքսայ. Խնդրեմ մի կարեր խօսքս. ուրիշ առթիւ ինչ է այս ահագին բազմութիւնն Լոնտոնի հրապարակին վրայ: Ազատ քաղաքացիներու ձայներ են որ կառավարութեան դէմ կ'բողոքեն և իւրեանց դժգոհութիւնն լսել կ'ընեն մինչև բարձունքի մէջ. . . . Կ'գտնիմ որ մեր խօսակցութիւնը կ'երկարաձգի: Դիտես անտարակոյս թէ ինչ էին Եւրոպիոյ մէջ առեն առեն պատահած յեղափոխութեանց պատճառներն: Բայց մեկդի թողունք այս առ այժմ և առանց հեռուն երթալու կ'ուզեմ մի քանի ձշմարտութիւններու վրայ խօսիլ քեզ:

Յայտնի է որ Թուրքիոյ ժողովուրդն տակաւին շատ յետադէմ է քաղաքակրթութեան նկատմամբ: Այն ամէն քաղաքական իրաւունքն զոր Եւրոպացի լուսաւորեալ ազգերը կ'վայելեն, մեզի անծանօթ են: Դիտութեան, ձարտարութեան և գաստիարակութեան այն հրաշալի հաստատութիւններն որ Եւրոպիոյ հարստութիւնն ու պարծանքն են, մենք չունինք . . . : Արդ՝ այս յետադիմութեան պատճառն դխաւորապէս ժողովրդեան դանդաղութիւնն է: Եթէ ղղայինք մեր վիճակին վատթարութիւնն, եթէ ձանչէինք մեր գոյութեան պիտոյքը, պիտի

Քանայինք անշուշտ քալել ընդ առաջ, և մեր իրաւանց պաշտպան կանգնիլ . . . :

Հաւատամ ինձ որ մեր աղքին և բարեկիրթ աղգաց մէջ համեմատաբար ընելու յանդգնութիւնը չունիմ, այլ կ'սպասեմ որ պէտք է աշխատիլ մեր սիրելի աղգայնոց հայթայթել այնպիսի միջոցներ որոցմէ բարոյական օգուտներ քաղին, նեղշնչենք անոնց ուսման և աղատութեան սէրն որով զգան իրենց դժբութիւնն և ընտիր Հայեր, քաղաքացիներ դառնան : Աղգային վարժարաններն առ հասարակ, և ընթերցատունն այս միջոցներէն մէկ քանին են, քանզի այս ևս կրթութեան վայր մի, տեսակ մի վարժարան է որմէ աղգայինը կրնան մեծ օգուտներ քաղել : Այս միջոցներէն մին է նաև այն մարդասիրական հաստատ ընկերութիւնն որ լուսնլսայն կ'պարծէ, կ'իմանամ այն անձնուէր, ժիր երիտասարդներն որ ձրիաբար դաս կ'տան, և խրատ կ'տրել կ'սորվեցնեն աղքատիկ և անդէտ աղգայիններու :

Ս մբատ . Դայիր եկար, ու վերտին ընթերցատունը մէջ բերիր : Եւրոպա շրջած այնչափ տաք դարձած ղիս ընթերցատան դրան մօտեցուցիր . ինչ չնշխարհիկ հաստատութիւն : Աւսկի պարոն Աշոտ կը գայ : (Պարոն Աշոտը բարեւելով) Խնդրեմ, բարեկամ, աղատե ղիս պարոն Զարմայրի ձեռքէն, ընթերցատան մի խնդիր բացաւ, և ծայրը չբերաւ . . . : Եկիր դու խօսէ անոր հետ, տեսնենք ի՞նչ են քու գաղափարներդ :

Աշոտ . Ո՞նչպէս, ընթերցատո՞ն վրայ կ'խօսիք . շատ ուրախ եմ քեզ հանդիպելուս, պարոն Սմբատ . կ'փափաքի իմանալ թէ արդեօք ընթերցատան անդամ դրուած չես . քանզի երբէք հոն տեսած չեմ զքեզ . թէև մենք վաճառականութեամբ զբաղած՝ սահել կ'յաճախենք այդ. հաստատութիւնն ու այլ և այլ տեղեկութիւններ կ'քաղենք : Ստուգիւ, ես կ'սիրեմ ընթերցատունն և անոր յառաջդիմութեան կը փափաքիմ : Սակայն, պարոն Զարմայր, մեծ ցաւ է ինձ և այլոց որ այս ձմեռ՝ ուրիշ տարիներու պէս՝ բանախօսութիւններ տեղի չունեցան, բանախօսութիւններ՝ որոց անձկանօք ուշիմիր լինելու կ'երթայի : Երկրորդ՝ ընթերցատունն՝ որ Հայ անուն կ'կրէ, հայերէն շատ գիրքերէ զուրկ է, եղածը գազիւարէն և մեծաւ մասամբ անզգիարէն են, թէև առաւելապէս հայերէն գրեանց պէտք ունինք :

Զ մբատ . Պարոն Աշոտի դիտողութիւնն բանախօսութեանց նկատմամբ՝ խիստ իրաւացի, իսկ հայերէն գրեանց նուաղութեան համար՝ քսան քի դիտութեան՝ ընթերցատան վարչութիւնը չէ սպասաւորը :

ջեան որոմ ընթերցուածն պրեանք պրեթէ բոլորն իրրև ընծայ տրուած են, անպղխարէն պրեանց մեծ մասն Մանչէսթերի մեր արդոյ հայրենակցաց նուէրներն են: Հաւատամ եմ որ, եթէ ընթերցուածն գանձային վիճակը նկրէր, Տնօրէն ժողովը հայերէն գիրքեր իսկ ձեռք բերելու փոյթ պիտի տանէր:

ՍՓՅՈՓ. (Որ զարմանօք Աշուղին երեսն ի վեր կ'նայէր) Կ'երազէմ արդեօք: Ինչ, դուն ևս անտոյ խելքէն ես, և ընթերցուածոյն կ'սիրես, կ'ծուռտուվանիս որ քեզ աւելի խելացի կ'կարծէի . . . :

ԱՇՈՒՂ. Այո, ժամանակ մի ես ևս քեզի պէս կ'խորհէի, ոչ թէ ընթերցուածը կ'սիրէի, այլ անտարբեր էի, սակայն զարմանալի պարագայ մի զիս բոլորովին այլայլեց: Գիտես արդէն՝ յետին ծայր Թուրքիս խաղին դերի լինելով՝ Յունաց Պատրիարքն կ'յանձնէի: Արդ՝ իրկուն մի բարեկամայ հետ Թուրքի խաղալու տանէն՝ քանի մը յոյն բարեկիրթ երիտասարդներ սրահին մէկ անկիւնը հաւաքուած ուսումնական խնդիրներու վրայ կ'վիճաբանէին, և աւելի իրիկուն Յունաց ընթերցուածոյն մէջ չդիտեմ որ էջ ֆէօդըլին ըրած բանախօսութիւնը կ'բանադատէին խիստ վատվատուն բայց վայելուչ կերպով: Հուսկ յետոյ ընթերցուածոյն օգուտներուն վրայ սկսան խօսիլ և կ'ցաւէին որ այսչափ տարիներէ ի վեր անփոյթ էին ընթերցուածն մի հաստատելու: Ետոյ խօսակցութիւնն ուրիշ դարձուածք մի առաւ և առաւել տպաւորեալ, երբ անոնցմէ մին յարեց, թէ Հայերն էին առաջին անգամ Զմիւռնիոյ մէջ ընթերցուածն հաստատողն և թէ Յոյներն անոնց օրինակին հետևեցան . . . : Թէև ուրիշ մ'որ այս վերջին դիտողութիւնն իբր ազգային ինքնասիրութեան ծանր կ'պատէր, հակառակը պնդելու կը ջանար, բայց մի և նոյն ժամանակ, իւր միւս ընկերներն միաբերան համոզելին որ այս ձշմարտութիւնը մի էր, և թէ Հայերն՝ թէպետև Թուով նուաղ Զմիւռնիոյ մէջ, բայց ինչ ինչ պարագաներու մէջ յառաջադէմ են . . . :

Այն միջոցին որ Թուրքիս կ'խաղայի կռնակս դարձուցած՝ ականջիս Հասաւ Հայի անունն. խաղս մոռցայ և ուշադրութիւնս բոլորովին նոցա խօսակցութեան ուղղած՝ և ոչմէկ կէտը կ'կորսընցընէի: Բոլոր երակներուս մէջ սարսուռ մի կ'ղգայի լսելով թէ օտարազգիք գովեստով կ'խօսէին իմ ազգիս վրայ: Առաջին անգամն էր որ կեանցս մէջ այսպիսի ղգացում մի ունեցայ: Առաջին անգամն էր որ ազգային սէրն իմ սրտիս մէջ կրակ մի կ'վառէր և ուրախութենէս բոլոր մարմինս կը դողար . . . : Վայրկեան մի սկսայ խորհիլ և լսել ինքն իրենս, «Ես

թէ օտարազգիք իսկ կ'դրուատեն զՀայերն որ ընթերցատուն մի հաստատած են, մինչ ես Հայ լինելով, հարկ չէ ինձ արդեօք որ անոր յարդը ճանաչեմ և անոր յառաջադիմութեան աջակից պտնուիմ»։ Եւ նոյն օրէն փութացի ընթերցատան անդամ գրուիլ, և կ'խոստովանիմ որ շատ գոհ եմ այս փոփոխութեան համար։ Բայց այս ևս ըսեմ քեզ, պարոն Սմբատ, թէ այս փոփոխութիւնն ուրիշ շատերու պատահեցաւ և մեր ազգայիններէն անոնք՝ որ յարդ անտարբեր էին կամ թիւր գաղափար ունէին ընթերցատան վրայ, համոզուած են արդ, թէ իսիտ օգտաւէտ հաստատութիւն մի է, և թէ անոր յառաջադիմութիւնն մեծ արգիւնք կրնայ արտադրել ազգային մէջ մեր ազգայնոց համար։

Այս խօսակցութենէ մի քանի օր ետքն, պարոն Զարմայր ընթերցատուն դնալով, տեսաւ պարոն Սմբատն որ ուշի ուշով լրագիր մի կ'կարդար։ Մեզմիկ անոր մօտենալով ըսաւ. — Ի՞նչ հրաշք — Սմբատ անոր ականջէն վար ըսաւ, — Ցունայ փաչիօն գիս այլափոխեց . . . ։

(Պիտի շարունակուի երբ նոյն պարոններն վերստին իրարու հանդիպին)

* * *

ԶՄԻՒՌՆԻՈՑ ՀԱՑՈՑ ԹԻՒԸ

Գոհ ենք որ մեր Հայ կ'աւելնայ ըլ կ'պակսի յօդուածն ուշադրութիւն դրաւելով ոմանք դրաւոր այլք բերանացի դիտողութիւններ կ'ընեն՝ մանաւանդ այն կիտին վրայ որ քաղաքիս Հայ բնակչայ թուոյն կ'վերաբերի։ Մանաւանդ յիշեալ յօդուածն ամբողջական Աբէնէ Մարէն առնելով հրատարակեցէն եւս՝ քանի մը տող ծանօթութեամբ կ'զարմանայ և չէ կարող ըմբռնել թէ ինչպէս տասն տարուան մէջ քաղաքիս Հայք կիսովին նուազած լինին, և ասկից կ'հետևցընէ որ տասն տարիէն Հայ մը չպիտի մնայ Զմիւռնիոյ մէջ։ Իսկ Աբշալոյս Անքաթոլեան նոյն կիտին վրայ Հայոց մը կողմէ նամակ մը կ'հրատարակէ

և Ա. Մաղզ տուած թիւերն սխալ և անուշադրութեան արդիւնք կը ղանէ, հրաւիրելով մեզ որ բացատրենք թէ ինչ կերպով արու աղջա-ւինք պակասած են: Սակայն եթէ Մանզուֆ մէկ կողմէ լուկ զարմանք կ'յայտնէ այս մասին, միւս կողմէ մեր յօդուածը հրատարակելով յայտնի կ'հատնի բաղնամարգութեան առթիւ Հայոց նկատմամբ մեր հանած ընդհանուր եզրակացութեանց, մինչդեռ Արշալոյս Մեծ. նամակագիր Հայն՝ որչափ որ աղջատիրութենէ շարժեալ կ'փոթայ մեր սխալած լինելը նշանակել, չհաճիր մեզի ուղիղը ցոյց տալ որ ըստ այնմ մեր գրածն շտկենք. իսկ մեր յօդուածին հիմնական սկզբունքին վրայ բոլորովին լռութիւն կ'պահէ: Այս լռութիւնն հաւանութեան արդիւնք համարելու իրաւունք ունինք:

Մենք արդէն ըսած ենք թէ մեր վիճակագրական տեղեկութիւնները թերի են և անստոյգ, թէ ընդհանուր Հայոց Ազգ թիւն որչափ է դեռ չգիտենք, և թէ այս մասին հաւանականութեան, անտեսական քանի մը սկզբանց համեմատ, և Հայոց հին թղթական կայութենէ դատելով կարող ենք միայն եզրակացութիւն մը հանել, անոնց նուազիլը հաստատելու համար:

Արդ՝ ժողովրդեան մ'ազգահամարն ընելը մանաւանդ անձի դործ չէ այլ պաշտօնական մարմնոյ մը: Մինչ ցարդ՝ մեր ազգային վարչութիւններն ու առաջնորդներն այս մասին անփոյթ գտնուած են, և տէրութեան պիւանները մէջ եղած ազգահամարի տումարներն վերաքննութեան կարօտ են: Բայց դարձեալ ձեռնհաս հեղինակութիւնը կառավարութիւնն է, և մենք պաշտօնական աղբիւրէ առնելով վերը վերոյ գրած էինք որ այժմ քաղաքիս մէջ 1,200 Հայք կ'պտնուին տու: Միայն մուգեր էինք նշանակելու որ այս թիւը չպարունակեր նախ՝ օտար տէրութեանց հայ հպատակներն, երկրորդ՝ դրսեցի Հայերը:

Տեղական կառավարութեան միջոցաւ 1867ին եղած ազգահամարէն կ'երևի որ այն ատեն 'ի Զմիւռնիա՝ պարզապէս և նայելը գնդ միասին առնելով միայն 1840 արու Հայք կային, ասոնցմէ մաս իջնելով անչափահաս և ապրիկար ազգայինք՝ տուրք վճարելու անկարող, պաշտօնական յայտագիրն ցոյց 1380 արու Հայ կ'ցուցընէ:

Արդ՝ ամուսնութեանց և ծննդոց նուազումն 'ի համար առնելով պէտք է հետևցընել որ մեր տուած 1,200 բնիկ Հայոց թիւն իսկապէս Հաւանական թիւ մ'է: Միայն՝ եթէ օտար հպատակ Հայերն և պատգամաւորներն յաւելունք՝ թերևս այս գումարն 1,600ի հասնի: Բայց

պիտի այս փոքր թուական տարբերութիւնն՝ Հայոց ընդհանուր նուաղման մասին մեր ըրած պատճառաբանութիւնը կ՚ջնջէ, մեր նախորդ յօդուածին հիմը կ՚խախտէ, ու երբէք. և այս է, ըստ մեզ ինդրոյն կեռուական մասը: Ո՛վ կրնայ հաստատել որ ընդհանրապէս բոլոր Հայք և մանաւանդ պատերազմական մերակներայք աւելնալու վրայ են քան թէ պակսելու: Մեր նպատակն էր ցոյց տալ որ Հայերն օր ըստ օրէ կը նուաճին և այս ընթացքով ևս քան զևս պիտի պակսին: Ա՛յս տխուր ճշմարտութիւն մ՚է իրաւ, և երանի թէ մեր կարծեաց անհիմն լինէր որ հաստատուն փաստերով ապացուցանէր: Յօժարակամ պիտի փութայինք յետս կոչել մեր բոլոր ըսածները, վասն զի Հայոց բազմանալն յաջողութեան և ջնջումն նշան պիտի համարինք:

Հարցրնել թէ ինչպէս պակասած են մեր հայրենակիցներն, հարցնել է թէ ինչպէս մարդ կ՚աղքատանայ, ինչպէս աղբիւրի մը ջրերը կ՚ցամքին, ինչպէս ազգութիւնները կ՚տկարանան: Երբ մէկ կողմէ շռայլութիւն, սուտ, անվայել պերճութիւն, մոլութիւն կ՚սպառեն ապարդիւնս աշխատութիւն, քրտինք, մարմին և հոգի, երբ ամուսնութիւնները կ՚դադրին անհիմն կամ փառասիրական նկատումներու համ չքաւորութեան պատճառաւ, բնականաբար ծնունդներն ալ կ՚դադրին, բազմամարդութեան կենսատու աղբիւրը կ՚չորնայ, և հետզհետէ ժողովուրդը կ՚քիչնայ: Թուաբանական բարձր դիտութեան պէտք չկայ համոզուելու համար որ Ջհիւնհոյ Հայը նուաղման մէջ են, երբ նկատենք որ այժմ հազիւ տարին 25—30 հարսնիք կ՚լինին, մինչդեռ ասկից տասն հինգ, քսան, երեսուն տարի առաջ եռապատիկն ու քառապատիկը կ՚լինէր: Եւ ինչո՞ւ այս տարբերութիւնը, վասն զի այն առատ պարզութիւն, սակաւասիրտութիւն, չափաւորութիւն բարուց և վարուց մէջ կային, իսկ այժմ աւելորդն, անօգուտն, զարդարանն անհրաժեշտ պիտոյք դարձած են և շռայլութիւնն՝ օրէնք մը: Մեր տկարութեան, մեր յետադիմութեան ներքին պատճառները հետազոտելով միայն կարող ենք անոնց դարման բերել և չէ թէ մեր ցաւերը ծածկելով և ազգային ինքնասիրութիւնը գգուելով, և Ա. Մ՚ան՚ն՚ը՚ն՚ որ սովոր չէ ամէն ինչ վարդագոյն տեսնել, այս պրութեան կ՚հետևի՝ օգտակար լինելու յուսով:

Հետևեալ յօդուածը կ'կարդանք Լը Թեմ (ժամանակ) լրագրին մէջ.

Բարիզի մէջ կանանց վճռակից քաջալերանաց համար ընկերութիւն անունով ընկերութիւն մը կայ որու մասնաժողովին անդամուհիներն ուղերձ մը մատուցին Վիկթօր Հիւկոյին՝ խնդրելով որ երևելի բանահիւսը համակիր գտնուի այն վերանորոգութիւններու որոց գործադրութեան համար կ'աշխատի յիշեալ Ընկերութիւնը : Վիկթօր Հիւկօ յետադայ պատասխանը տուաւ այն ուղերձին :

Բարիզ, 31 մարտ 1875

Տիկիններ ,

Ընդունելոյ ձեր նամակը ուր պատիւ կը բերէք ինձ : Կը ճանչեմ ձեր աղնիւ և օրինաւոր պահանջումները : Մարդկային ընկերութեան արդի կազմութեան ձևովը կիները բոլոր կը հնազանդին և կը տառապին . ուստի իրաւունք ունին լաւագոյն վիճակ մը պահանջելու : Ես խիղճ մ'եմ միայն , բայց կը հասկընամ անոնց իրաւունքը , և ասով իմ պարտքը կը կազմեմ և կենացս բոլոր ջանագրութիւնն անոնց կողմն է : Իրաւունք ունիք յօժարամիտ օժանդակ մը տեսնելու յիս :

Մարդս տասնութերորդ դարու անլոյծ խնդիրն եղաւ . կինն ալ տասնևիններորդ դարու անլոյծ խնդիրն է : Կինը ըսելով մանուկը , այսինքն ապագան ըսել կ'ուզենք : Խնդիրն այսպէս առաջագրուելով իր բոլոր խորութեամբը կ'երևի : Մարդկային ընկերութիւնն այս խնդրոյն լուծման շնորհիւը միայն պիտի հանդարտի վերջնական կերպով : Տարօրինակ և բուռն կայութիւն խակասէս . արը ձեզմէ կատաւմ ունին . կինը մարդուս սրտին տէրն է : Օրէնքին առջև կինն անչափահաս է , անկար է , քաղաքային գործողութիւն չունի , քաղաքական իրաւունք չունի , վերջապէս օրինաց առջև ոչինչ , բայց ընտանեաց առջև ամեն ինչ է , վասն զի մայր է : Կինն իր ուզած հանգամանքը կը տայ ընտանեկան յարկին : Բարւոյն ու չարին սիրտն է ան : Բայց այս սիրասեռութեան մէջ հարուածահարութիւն ալ կայ : Կինն ամեն բան կրնայ ընել մարդուս դէմ , այլ ոչինչ կրնայ ընել իրեն համար :

Օրէնքն անխոհեմութիւն կ'ընէ այնքան տկար ձգելով կինը , մինչդեռ այնքան զօրեղ է ան : Ճանչենք և պաշտպանենք այս տկա-

բռնթիւնը։ Ճանչէ՛նք և խրատե՛նք այս զօրութիւնը։ Ա՛յս է մարդուս պարտաւորութիւնը, այս է նաև իր շահը։

Ըսի և անընդհատ սլիտի ըսեմ թէ խնդիրն առաջադրուած է և մշ լուծուելու սլէտք ունի։ Մ՛վ որ բեռէն իր մասը կր կրէ, կը պարտաւորի իրաւունքէն ալ իր մասն ունենալ։ Մարդկային սեռին կէսը հաւասարութենէ դուրս է, սլէտք է հաւասարութեան վերածել զայն։ Մեր մեծ դարուն մեծ փառաց մին սլիտի ըլլայ մարդուս իրաւունքին իբր հակակշիռ կնոջ իրաւունքը տալ, այսինքն օրէնքն և բարքը հաւասարութեան մէջ դնել։

Ընդունելիք յարգանաց հաւաստիքը, սիրիններ։

ՎԻԿԹՈՐ ՀՒԿՕ

ԱԶԱՏԱՄԻՏ ՌՈՒՍ ՄԸ

Օր մ՚օրանց
Զասէք հապա
Մեծ հրաշքի
Հանդիսեցայ,
Ետտ զարմացայ։
Մի Ռուս մարդ
Այնչափ ազատ
Կը խօսակցէր
Մէկ Հայու հետ,
Ես կարծեցի
Որ անիկա
Ամիրկացի
Մի ըլլայ։
Թէ «Մենք Ռուսերս,
Կ՚ըսէր Ռուսիկս,
Գիտէ՞ք ինչու
Ազգութիւնները
Երկիւղ՚ի մի
Կ՚ուզենք ծուլել.
Որպէս զի երբ
Մարդիկ համայն,
Մարդկային ազգ մ՚
Հետանան,
Այն սկզբանց
Մեծ օգնութիւն մ՚
Ըլլանք ըրած.
Հարիւրաւոր միլիոնով
Մէկմանց դառնանք
Եւ այն խնդրին
Ետտով վերջ տանք։»
Է՛, հէ՛, հա՛,
Զսպես հապա
Մտիկ անող
Պարզ Հայն չգիտէր
Թէ խիստ կծու
Սոխի մը հետ
Բունուած էր։
Ազատամիտ է ասնոր
Վարպետ Ռուսիկս
Եւ խաչ ծոցէն
Հանեցինք։
Գիտէ՞ք մարդուս
Մխրճն ինչ էր,
Եամ այս խօսքով
Ինչ ըսել կ՚ուզէր.
Կ՚ուզէր համայն
Մարդկային ազգ
Ռուս ըլլայ
Եւ գործն այսպէս
Վերջանայ։
— Ապա դու ի՞նչ կարծեցիր,
Առած մ՚ կայ
Մինէ սոխին
Աղէկն կ՚ըլայ։ ԱՍՊԵՏ

ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑ Ս. ՅԱԿՈԲԵԱՆՑ ՎԱՆՔԸ

Երուսաղէմայ սրբոյ Յակոբեանց դերահռչակ վանքն իւր Հոյակապութեամբն և կրօնական բարձր նշանակութեամբն ամեն ժամանակ նախանձելի եղած է օտար Քրիստոնեայ ազգաց, բայց ներկայ Ամենապատիւ Տ. Եսայի սրբազան պատրիարքին օրով աւելի փայլ առած և կրկնակի պարծանայ առիթ եղած է ազգիս:

Այս փայլը՝ փոխանակ ըսելու, Նիւթական Ճոխութեան փայլ չէ, որովհետև ամեն մարդ գիտէ թէ քանի մը տարիներէ՝ի վեր ուխտաւորաց նուազութեան պատճառաւ՝ այս մեծ վանքն իւր մեծապատումար ծախուց չկրնալով հասնիլ, տասն հազար լիրայի չափ ալ պարտական եղած է այսօր. այլ բարեյաջող աւելի բարգաւաճ վիճակի մէջ կը գտնուի Ամենապատիւ Տ. Եսայի պատրիարքին ուսումնասիրական ջանից շնորհիւ: Նորին Սրբազնութիւնն իննչպէս Սիոնին նիւթական պիտոյից՝ նոյնպէս և անոր բարոյական և ուսումնական պիտոյից անհրաժեշտ կարեւորութիւնը ճանչնալով՝ հաւատարապէս կը մտատակարարէ, և այսպէս քանի մը տարուան մէջ ուսումնարանն ու տպարանն այնպիսի յառաջդիմական վիճակի մը հասած են, որ ժամանակէ մ'ի վեր սուրբ Երկիրն յաճախող Ուրուպացի պիլոնոց և բարձրաստիճան անձանց գովութեանը կ'արժանանան և մեր ազգին յորդը կը մեծցընեն աշխարհի առջև:

Հետևեալ նամակն ու յօդուածը, որը քաջատեղեակ ուսումնական Հայ երիտասարդ մը գրկած է մեզ, մեր բառերին նոր ապացոյց մ'են, և տարակոյս չկայ որ ամեն Հայ պիտի բերկրի կարդալով (ի բաց առեալ անհատասեր պարագայ մը) և աւելի ջերմ համակրութիւն մը ղգայ Ս. Յակոբեանց Աթոռին և նորա գահակալին վրայ, և՝ ինչպէս կը յուսանք՝ պիտի գտնուին ազգիս մէջ վեհսիրտ և ազգասէր հարուստներ, որք ազգին այս չնաշխարհիկ պարծանքն իւր ներկայ նիւթական նեղ վիճակէն ազատելու և իւր ազդօգուտ ջանից մէջ քաջալերելու համար իրենց առատաձեռն օգնութիւնը չպիտի խնայեն:

Փարիզ, 6 ապրիլ 1875 ն. տ.

. . . Խմբագիր,

Ձեր ազգօգուտ Մաֆֆ լրագրէն 1653 և 1654 թիւերուն մէջ ա-ձեն ազգային՝ որ մեծ սիրով կարդայ Վէֆէնի գը Կոնշէնի ազգերնուս վրայ գրածը, ոչ պակաս ուրախութեամբ անշուշտ պիտի տեսնէ հետաքրքրողները՝ զորս Ընկէր գը Տէ Մէռ անուն ընտիր պարբերականին ապրիլ մէկի թիւէն քաղելով և թարգմանելով կը ղրկեմ Ձեզ։

Հեղինակը, եթէ չեմ սխալիր, Գաղղիոյ դեսպան կոմս գը Վոգիէի որդին է, որ այժմ Պօլսոյ դեսպանատան մէջ քարտուղարութեան պաշտօն ունի։ Ասկէց մէկ քանի տարի առաջ (1872) յԱսորեստան և մասնաւորապէս ի Պաղեստին ըրած ճանապարհորդութիւնն ի դրի առած ըլլալով այժմ վերոյիշեալ ուսումնական և հանրածանօթ թերթին մէջ տպել կու տայ։

Այս երիտասարդ քաղաքագիտին հնագիտական և պատմական հմտութիւնքն այնչափ առաւել ուշադրութեան և ընթերցման արժանի են, որչափ և իսկ իւր շարադրութիւնը՝ որ հաճոյ և դողոր, պարզ բայց վսեմ ոճերով ամեն տեղ կը փայլի, և հիմակուընէ նշմարել կու տայ Գաղղիական Ակադեմեային ապառնի անդամներէն մին։

Երուսաղէմ հասած առեն, այլոց պէս բնականաբար մեր Ս. Յակոբայ վանքն այցելութեան երթալով՝ հետեւեալ կերպով կը խօսի վանքին, Ամեն. Եսայի ազգասէր պատրիարքին և ընդհանրապէս մեր ազգին վրայ։

«16 դեկտեմբեր

«Ըսխատաղիներն և աւերակներն ըրած պատմներնիս քաղաքին անցեալը մեզ ի՛ուսուցանեն. բնակիչներուն այցելութեան ընթերցումն հիմակուան Երուսաղէմի վիճակին խելամուտ կ՛ըլլամք։

«Ամենէն հետաքրքրականն երէկուան այցելութիւննիս եղաւ Լատին արեւրչական Հայոց Պատրիարքին՝ որ Սիօն լեռան վրայ կը նստի Ս. Յակոբայ հին եկեղեցւոյն մէջ, որ արդ իւր հատարակութեան սեպհականութիւնն է։ Վանք մը ընդարձակ և լաւ շինուած, դպրոց մը՝ որուն նմանը քիչ կը գտնուի Տաճկաստանի մնացեալ մասերուն մէջ, լեցուն աշխարհացոյց տախտակներով, Եւրոպական գիրքերով, քնադիտական ժողովածոյներով և գործիներով, տպարան մը վերջապէս կը վկայեն թէ այս աշխատասէր և հանճարեղ հասարակու-

թիւնը՝ կը ներկայացընէ աստ, ինչպէս նաև բոլոր կայսրութեան մէջ, մտաւորական շարժման մէկ մեծ մասն: Կանդ առնելով մամուլներուն առջև՝ զոր ճարպիկ գործաւորներ՝ ի գործ կ'ածէին հազիւ երէկ լեզուաւ Աւետարան տպելով, չենք կրնար հիացումը մեղմել հեռացընելու: Արևելեան ոգին՝ մեր քաղաքակրթութեան սքանչելի ջենջով մարմին կ'առնէ այս թաց թուղթերուն վրայ ղրմանալի գրերով խորհրդաւոր լեզուի մը մէջ:

«Լամարթին Աբնէլեան Զոյեցեաֆինէ կ'անուանէ ղՀայս: Այս անունը ճշմարիտ է, քանի որ կը նկարագրէ անոնց ուղղամտութիւնը, հաստատամտութիւնը, աշխատասիրութեան և խնայողութեան արտաքոյ կարգի յարմարութիւնները. յատկութիւններ՝ որք անոնց ձեռքն անցընել տուին Արևելքի վաճառականական կեդրոններուն մէջ շարժուն ստացուածոյ առ նուազն երրորդ մասը: Որդիք լեռնոյ, սոքա ևս, իջեալ Կովկասեան թանձրախիտ անտառներէն և վանի սարահարթի բլուրներէն, ուր իրենց ցարմին օրօրոցն եղաւ, ճակատագիրը զիրենք կարի լման հեռացուց անտի: Թերևս ամենէն աւելի աչքի ցարնող օրինակ մ'են կրօնական կապով ամիոփեալ և ապահովեալ ազգային կապի յարատևութեան Արևելքի բաժանեալ ցեղերուն մէջ: — Այս լայնատարած կայսրութեան և Պարսից թագաւորութեան համայն կողմերը ցրուած՝ ունկնք մուցան Հայրենական լեզուին և կ'հասկրնան միայն Տաճիկ կամ Արաբ ազգերուն՝ որոց մէջ խառնուած են: Բայց ուր ուրէք որ բազդը զիրենք ժողվեց, զիրար կը ճանչնան, զատ հաստարակութիւն մը կը կազմեն, կը միանան ու իրարու ձեռնտու կ'ըլլան, խորանին շուրջը կը բոլորին աչուընին դարձընելով դէպի կրօնքնուն գերագոյն պետը, այն է աս Պատրիարքն՝ որ կը բնակի Էջմիածին Հայրենի լերանց մէջ: Գիտեն ապացուցանել այնպիսի մասնաւոր յատկութիւններով զոր ինչեցի, գյարատևութիւն և զժառանգութիւն իրենց մէջ՝ ինչ որ ազգ մը կը կազմէ, ազգային բարք մը:

«Ներսեսաղէմեայ Պատրիարքը գեռ երիտասարդ մարդ մ'է, հսկայ հասակով, ազնուական և հանճարեղ դէմքով: Իրաւապետութեան աշակերտ եղած է, կը հաւատացուի մի, ի փարիզ, ուր ուսած է լուսաւանկարչութիւնը զոր յաջողութեամբ ի գործ կ'ածէ: Արևելեան կեանքին դառնալով, հոն գտաւ մեծութեանց հետ ի միասին մեծին որոգայթները: Իրեն դէմ կազմուած դաւադրութիւն մը երկու անգամ ջնջուեսւորել փորձեց զինքը. ուժեղ կազմուածքովն ազատեցաւ, յանդ

յաւորները վանքին բանտը նետել տուաւ. բայց ալ չհամարձակիր քրոջը պատրաստածներէն զատ ուրիշ կերակուր ուտելու։* Տարօրինակ ճակատագիր արդարև այս հայրապետինը. Լատին երիցն† սկսիլ և վերջանալ Հաղբ և մեկ գլխբռնց բանտարկութեան մը մէջ։

«Ճիշդ այս ատտու յուցուցին մեզ Զիմինեայց լեռան վրայ նոր խուզարկութեամբ երևան եկած շատ մը հետքեր։ Ապացոյց մ'են ատոնք թէ ժամանակաւ բազմաթիւ հայ գաղթականութիւն մ'եղած ըլլայ այս բլուրին վրայ որ արդ անբնակ է։ Հայաստանի ժամանակագիրք կը խօսին ութերորդ դարուն մէջ Երուսաղէմ քաշուած արքունի ընտանիքէ իշխանուհիներու վրայ. պէտք է որ անոնցմէ համաբիլայս ննայորդները։ Ճարտարապետական կտորներ են ատոնք, յոյժ հետաքրքրական ու շատ լաւ ճմուռ մխսնէ քարեր, հայերէն նշանագիրներով զերեզմաններ, խաչագրաշար կապարէ պատգներ։ Կը գտնուին ևս մանր մունր բաներ, շիրիմներու մէջ եփած քարէ պզտիկ կանթեղներ ըստ սրտաշարժ և խորհրդաւոր սովորութեան որ կուսաստաններէն անյայտ է առաջին դարերու քրիստոնէից։ Արշխալոյսը կզգեայ հին գերեզմանայ մէջ մեռեալը պատկած է կանթեղ 'ի ձեռին։ Այս լոյսը տրուած է իրեն, որպէս զի կարողանայ լքնել 'ի յաւիտենականութիւն, և լուսաւորել գինքն ահեղի խաւարայ մէջ։ Իսկ այժմ գերեզմանայ մէջ կանթեղներ կը գտնուին փոշը քիչմը վառօդով։ Կ'երևի թէ մեռեալը հոն Թողուցեր է իր անպէտ լոյսը՝ աչքերը բանալով յաւիտենական լոյսին մէջ։

Գ. Ն.

*Սյս խրողութիւնը բոլորովին անծանօթ է մեզ, եւ կրնանք վստահութեամբ ըսել թէ սխալ կամ անհիմն է։ Մենք չենք կրնար հաւատալ որ այսպիսի եղեռնական դատաստանութիւններ նիւթուած ըլլան Ս. Երուսաղէմայ Հայոց վանքին մէջ, եւ Ս. Պատրիարքն ալ այնչափ վախցած եւ անվստահութեան ու կասկածի մէջ ինկած ըլլայ, որ իւր քրոջը պատրաստածներէն զատ ուրիշ կերակուր չուտէ։

Սյսպիսի իրողութիւն մը ծանր արատ կը բերէ Ս. Երուսաղէմայ միաբանութեան վրայ. ուստի հարկ է որ պատասխանուի միաբանութիւնն եւ Ս.մեն. Ս. Եսայի պատրիարքն առանց հերքման չձողուն վերոյիշեալ տողերը։

Ծան. Խմբ.

†Փարիզի ուսանողաց Թաղը ըսել կ'ուզէ։

(Մնացեալ)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Կ. Պոլիս, 20 ապրիլ 1875

Բաբեկամ, Թայմզ լրագրի համար կ'ըսեն թէ ամէն օր կարծիք կ'փո-խէ, առջի օրուանն միւս օր չընելով, և սակայն Հառաբակայ կարծիքը կ'վարէ, աշխարհի քաղաքական լրագիրներուն վեհապետն է, և ստէպ պատգամը, նորանշան զօրութիւն մ'է որ միշտ քաղաքական ղօրութեանց մէջ մեծ կշիռ ունի: Արդ՝ եթէ մեծանուն լրագիր մը այսպէս կ'շարժի, ղարմանք չեն եթէ փոքրապոյն, և մանաւանդ կէս պաշտօնական թերթեր, օրինակի համար Լա Թէբէթ, նոյն ընթացքը կ'բռնեն: Այս օրագիրն ի դիտէ որու դրդմամբ, քանի մ'ամիս ա-ռաջ բաւական ծանր դիատղութիւններ ըրած էր, ինչպէս դիտես, Հայոց վրայ, օտարներու դրամական օգնութեան կարօտ, յետադէմ վիճակի մէջ և «բէչ քանով զանոնք գրաղած ցոյց տալով: Այժմ եղեր՝ Ցունաց հետ բաղդատելով՝ Հայերն կրթութեան քանի մը կէտերու մէջ աւելի յառաջադէմ կ'գտնէ և անոնց դովեստներ կ'շռայլէ, և կ'բա-ցէ թէ օբէնսգէտներ, դրագէտներ, դիւանագէտներ, և ուրիշ շատ տեսակ գէպքեր ունինք: Ուստի է այս փոփոխութիւնն, երբեմ Յոյնը կ'գովէր Հայը վարնելով, այսօր Հայը կ'գովէ Յոյնը մեզի հետևող ցոյց տալով: Արդեօք Մաֆէի առած գաղէն օգտած քաղեց Լա Թէբէթ թէ ոչ մեզ աւելի մօտէն քննելով իր սխալմունքն ուղղելու արիութիւնն ունեցաւ: Ինչ որ է դրկիր, իր պարսաւն ու դովեստը դիս անտարբեր գտան բոլորովին: Առաջինն անպատեհ, անվայել, թերևս թշնամական, երկրորդը չափազանց էր, և Ցունաց ինքնասի-րութիւնը դրդռելու և քաղաքական քանի մը հակումները դարմելու մտօք դրուած, հետևապէս ձշմարտութենէ դուրս: Վատն դի կարծող ենք համեմատել Հայերը Ցունաց հետ յառաջադիմութեան խնդրոյն մէջ: Եթէ ունինք քանի մ'առաւելութիւններ, անոնք տասնապա-տիկն ունին: Եթէ մենք մեր ընթերցարաններով, լսարաններով Ցու-նաց նախանձելի դարձանք և օրինակ, անոնք քանի քանի օրինակ-ներ կ'ընծայեն մեզ թէ Հայրենասիրութեան, թէ միութեան, թէ գործունէութեան, թէ ձեռներէցութեան, թէ խնայութեան, թէ

բարձրագոյն ուսմանց մշակութեան մասին, օրինակներ որոց հետևելու վրայ չունինք բնաւ։ Արդարև կան մեր մէջ փառաւոր անուններ, որ շատ կ'բերեն և ուշադրութիւն կ'պրաւեն, կան ձարտարութեան և արուեստից քանի մը ճիւղերու մէջ նշանաւոր անձնականութիւններ, սակայն ասոնք միայն ինքզինքնին կ'ներկայացընեն և ոչ հայկական մարմինն, որուն վրայ ներգործութիւն չունին մեր տղիտութիւնէ սեպէ, իրենց անտարբերութենէ սեպէ։ Ժողովրդեան մեծ, ստուար մասը թէ մայրաքաղաքն և թէ գաւառները, նիւթապէս և մտապէս ողորմելի վիճակի մէջ է, և ստէպ անոնի վէճերով, երկսայտակուսթեամբ իր դժբ սպառելէն զատ, ստորին կամ հինցած արուեստներով ու միջոցներով իր ապրուստը կ'հոգայ։

Միւս կողմէ վեր՝ի վերոյ ակնարկ մը ձգէ Ցունաց վրայ։ Իրենց գպրոցները մերիններէն շատ առելի առաջ են և օր ըստ օրէ նոր նոր մեթոտներով, դիտութիւններով և պարզևներով ճոխացընելու, ժամանակիս պիտոյից համապատասխանող դիրք մ'անոնց տալու կ'ջանան։ Ժողովրդեան ստորին մասը՝ թէև աւելորդապաշտ, զրեթէ մոլեռանդ և ժլատ՝ լիաձեռն կ'օժանդակէ, այս կամ այն տուրքին հաճելի երևելու համար, աղգային հաստատութեանց և ուխտատեղիներն հասոյթից անսպառելի աղբիւրներ դարձած են, որոց միջոցաւ ստէպ հոյակապ եկեղեցիներ և դպրոցներ կ'կանդնեն։ Ցոյն կղերն՝ իր կրօնական շրջանին մէջ անազատ և աննեղող՝ հետզհետէ կրթուելու կ'ձգնի և իր անդամներէն գերմանիա կ'դիմեն դիտութիւն և նոր նոր բարոյական զէնքեր գինուելու համար։ Իսկ երբ խնդիրն աղգային պատուոյ, հայրենասիրական գործի, առևտրական մեծ գործառնութեան մը վրայ դառնայ, կ'տեսնես որ յետին Ցոյնն իսկ իր անձնական վէճը, ներքին կռիւը թողուլ հասարակաց շահուն կամ աղգօգուտ նպատակին համար կ'խելագնէ, կ'միանայ, կը գործէ անդուլ։ Մանաւանդ իր նշանաւոր նախնեացը յիշատակներէն շփանալով՝ Եւրոպայի երբեմն դաստիարակը, այժմ ինքզինքը յարդել տալու կ'ձգնի օտար աղգաց մօտ, յարաւելութեան, յանդգնութեան նախձիրներ գործելով և երբեմն ալ անխոստովանելի միջոցներու դիմելով։ Ուր որ դանուին Ցոյնք իրենց հին ոգին կ'պահեն, տիրապետութեան, և ըստ որում այժմ կ'դիտեն որ Միլլիատի և Թեմիստոկլէի ժամանակները չեն ապրիր։ և իրենց չորս կողմը չէ թէ քաքաքաննէր այլ կիրթ ժողովուրդներ կ'դանուին, անոնց յառաջադիմութեան սարքերն իւրացընելու և իրենց աղգային հանդամանաց յարմարցը-

նեղու կ'ձգնէն որ զօրանան և այնպէս դործեն : Ցոյնն ուր որ երթայ իր հետը կ'տանի իր չարքաշ , խիզախ , տնտես բնութիւնը , և կղզիներու այս որդին՝ չմոռնար իր նաւն , յարաբերութեան , վաճառականութեան , ազատութեան , յաղթութեան այս դերագոյն դործիքը , որ թէև շարժուն՝ երբեմն Ասիոյ բռնակալները դողցուց և հայրենի անշարժ կայանի մը հզօր զրկու մ'եղաւ : Ծովն ու նաւն իր բուն տարերքն են , ազատութեան երկու աղբեղիկ միջոցներ . մին ասպարէզն՝ անհուն , միւսն՝ թևն , միշտ՝ յոլաթև : Սակայն ցամաքն ալ չանպատներ Ցոյնը և այսօր Թուրքիոյ բռնակալ մեծ մասին երկրագործութիւնն , երկրին հարստութիւնն իր ձեռքն է , այսօր ամէն կարևոր արուեստներն՝ որ մարդուս անմիջական պիտոյից կ'հայթայթեն և զորս Հայը սակս կ'անդատնէ , իր ձեռքն են , այսօր Եւրոպիոյ ամէնէն մեծ մայրաքաղաքայ մէջ դրամական , շահադիտական գործառնութեանց մասին մեծ զարմանալի դեր մը կ'խաղայ , թէև իր քաղաքական միտումները հանրածանօթ՝ Ցոյնն Օսմանեան կառավարութեան բարձրագոյն պաշտօններու մէջ կ'երևի քան թէ Հայը , որ իր զարատար հաւատարմութեամբը կ'պարծի , և քան զՀայն աւելի յարգ և երկիւղ կ'ազդէ : Ո՞նչ է այս բազմադիմի առաւելութեանց պատճառն , թէղ իր հին անունն և նոր քաղաքական դիրքն , որ մեծ կշիռ ունին , իր ազգային քանի մը դովելի հանդամանքն են , որ իր թերութեանց վրայ սակս քօղ կ'ձգեն , և զորս երկարօրէն բացատրեցինք այս տեղ անպատեհ է :

Ազգ մ'որ դարերէ 'ի վեր՝ անդուլ յարատևութեամբ նպատակի մը կ'դիմէ , այս է ազգային վերաշինութեան , ազգ մ'որու մէջ ծեր ու երիտասարդ , կին ու մանկտի նոյն ոգին ունին , 'ի հարկէ աւելի շուտ կ'քալէ , օտարներու առջև յարգ և նշանակութիւն կ'ստանայ , լուսաւոր աշխարհի համակրութիւնն ու կարծիքը կ'շահի : Այսպէս է Ցոյն ազգն , որ միահամուռ նոյն ղգայութիւններով , նոյն սկզբունքով կ'ոգևորի երբ խնդիրն ազգութեան վրայ կ'դառնայ , և իր ոյժը սնոտի վէճերով , նեղքին պատահմունքներով չսպառեր երբ թշնամւոյն առջև կ'պտնուի : Հայը չունի այս ոգին , Հայը տարբեր տարբեր դոյն և դիրք կ'առնու նոյն իսկ իր կենսական շահերը վտանգի ենթարկուած առեն :

Այս բաւական չէ , Ցոյնք օր ըստ օրէ կ'յաջողին և կ'բազմանան . մենք թշուառութեան մէջ կ'նուազինք : Մինչդեռ դու և այլք Հայոց նուաղման վրայ կ'ողբաք , ասոր պատճառները փնտռելով զարմանը

ի՛ցուքընէք, ասպիս անդին կ՛պանուին սև պլուխներ որ ամուսնու-
թեան դէմ կ՛խօսին, Ազնաւորական կենսայ անուշութիւնները կ՛եր-
դեն, մեզ հին դարերու անշարժութեան տանելու կ՛ձգնին։ Դեռ
անյանգներն՝ Յոյս հանդիսին միջոցաւ վարդապետ մ՛երկարօրէն կը
ձառէր հաստատելու թէ մարդուս համար ամուսնութիւնն անհրա-
ժեշտ պիտոյք չէ, թէ սրբակեցութիւնը գերազոյն առաքինութիւն մի
է, և այլն։ Յոյսն որ չղջկի պէս խաւարի մէջ կ՛թռի, որ անդէտս
անդրաշխարհական տեսիլներու հայելին է, կ՛մտածայ մարդկային
ընութիւնը, կ՛մտածայ որ մեր հին հայրապետները զաւակաց տէր է-
ին։ Ըստ երևոյթին՝ եթէ կայ չնաշխարհիկ աշխարհ մ՛որու մարդիկ
սեռնչալ պէտք են, իրեն համար ներքինիներու աշխարհ մ՛է։ Ինու-
թեան առջև, պատմութեան առջև, դիտութեան առջև այսպիսի
անձառնի կարծիք դատանիլ ու հրատարակելու համար մեծ բաւական
կոյր լինելու է. Ձիշտ այն միջոցին որ ուրիշ երկիրներու մէջ կղերին
ամբարի վիճակն՝ իբրև անբնական, կարևոր վիճաբանութեան նիւթ
եղած է։ Երբ այս տեսակ պաղափարներ լոյս կ՛տեսնեն մեր մէջ,
կրնաս երևակայել թէ ժողովուրդն ուր և Յոյսն ուր կ՛ապրին։ Թող
Մասիսի մէջ պ. Ն. Ճ. խիստ բանաւոր և գիտնական փաստերով հեր-
քէ ամուսնութեան Ճշնամանչն անուրջը, Յոյսն՝ երբ Ճարը հատնի՝
պիտի ըսէ թէ իր առարկուին խեղճը ըլ-իը չէ։ Բայց մարդուս խելքն
իր գործէն և խօսքէն կ՛գատուի և եթէ այս պարագայիս մէջ բաղդա-
տութիւն ընելու պէտք լինի, Յ-ոյ վարդապետին դանկն շատ
դատարկ և բաժութեան կարօտ է պիտի ըսէի։ Տգէտ կրօնաւորի
գէնքն՝ երբ իր ասֆնքը չգօրէ, քամութիւն, Ճշնամանք և դրպարտու-
թիւն է։ Դու անոր բան կ՛ըսես, նա իր անսխալականութեան մէջ
ամրացած՝ կ՛գատնայ քեզ՝ մոլի, յիմար, անհատատ կ՛անուանէ։
Ի՞նչպէս վիճաբանիլ այսպիսի պլուխներու հետ։ Ափսո՛ս որ՝ ի բայ
առեալ դաս մ՛ընտիր եկեղեցականներ, մեր կղերին մեծագոյն մասն
իր կոչումն, այս է միաքերը լուսաւորել, իր մեծ դերն, այս է աղ-
գութեան ոգին զարգացընել, չգիտեր։ Անդադար կ՛կրկնեն մեզ.
— Հոգևորականը պիտի աղաւէ ձեզ թէ աստ և թէ անդ, ձեր
բարոյական և մտաւորական դերութեան աղաը պիտի սրբէ, անոր
միջոցաւ ձեր իրաւանց պիտի տիրանաք, նա ձեր բնական առաջ-
նորդն է, և այլն։ Եւ սակայն ամենօրեայ փորձով կ՛տեսնես որ
մեր հոգևորական դասն ուր մնացած է, ի՛նչ պղտոր մթնոլորտի մէջ
կ՛ապրի, ի՛նչ յետադիմ գաղափարներու կ՛ծառայէ, ի՛նչ փառասիրա-

կան խորհուրդներով ազգին հոգին ու օդուտը կ'մոռնայ և անոր խիղճը կ'սպաննէ, և սակայն մեր այս կարծեցեալ պաշտպաններն և ուսուցիչները մեր բանականութեան և աղատ մուծմութեան իրաւունքէն անդամ մեզ զրկելու կ'ջանան, որպէս զի մեզ իբրև անբան հօտ վարեն, խեղդելով իրենց սակաւամիւս, բարենպատակ պաշտօնակիցներու ձայնը: Պիտի յայտնուին. ոչ երբէք: Նա մանաւանդ օր ըստ օրէ պիտի կորուսնն իրենց հոգևոր պաշտօնին ներգործութիւնն, եթէ չսթափին . . . :

ՇԱՀՆ ՈՒՐ

ՍՓԱԼԻ ՄԱՀ ՏԻՐԱՄՕՐ

Եւ մեք բոլոր Հայ ժողովրդեան միանալով՝ մեր խորին վշտակցութիւնը կ'յայտնենք ամենատաւիւ սրբազան Պատրիարք հօր, որ եթէ մեծ, զգալի կորուստ մ'ըրաւ իր Տիրամօր մահուամբն, ազգն ալ կորսընցուց սպրդեշտ, աղնիւ, առաքինի մայր մը: Այսպիսի մայրեր հազուագիւտ, ըլ ներսէսներ հազուագիւտ են մեր մէջ: Մեր վիշտն աւելի ձշմարիտ բացատրութիւն մը, մեր սիրտն աւելի վսեմ միխիթարական խօսք չկրնար գտնել քան թէ Ամեն. Խրիմեան հօր նամակին մէջ զոր ուղղած է պատրիարքական վշտակիր Գահակալին և զոր այս տեղ հրատարակել արժան կ'դատենք՝ Մաչ լրագրէն առնելով:

Ամենատաւիւ սրբազան Հայր,

Մարդոյն Քրիստոնէական պարտիքն է, կը խօսի սուրբն Պօղոս, լալ ընդ լացողս, խնդալ ընդ խնդացողս: Եւ ես մարդ եմ, կը վշտակցիմ Քեզ, սրբազան Տէր. Քո վիշտ յուշերեր ինձ, զի և ես իբրև զՔեզ Մայր ունէի, նա մեռաւ, և ես չտեսի զինքն. . . ահ, սանդուխտ էի:

Այսպէս է Աստուծոյ և աշխարհի անյեղլի օրէնք. դու դիտես, մայրերն ու հայրերը կը մեռնին, ծնողասէր որդիք կը սգան, և

շատ անգամ ևս ծնողական դորովոյն և սիրոյն առաջ որդիք տարաժամ կը մեռնին, որոց վրայ անմխիթար ողովի՛ողբան ու կը մորմոքին որդեկորոյս ծնողք։ Ես չգիտեմ. մայրիկդ հրճուեցա՞ ու ննջեց, թէ լացաւ, երբ ինքն ևս Ցիսուսի Մօր պէս տեսաւ զքեզ Գողգոթայի Աթոռին վերայ փառաւորեալ՝ ի չարչարանս։

Այլ մխիթարեմ՞ զոս, արտասուքներդ սրբէ. դի դուք այսօր հաստարակաց հայր էք. դուք շատ մայրեր, շատ հայրեր, շատ որդիներ ու շատ քոյրեր ունիք, և ձեր մեծ պաշտօնն է աշխարհիս սգաւորները մխիթարել։

Ներողութիւն կը խնդրեմ, վշտահիր սրբազան Հայր. հին յօդացաւս կրկին դառնալով՝ ոտքս պարտանդեց, չգիտցայ որ ես ալ հանդուցեալ առաքինի Մօրդ յուղարկաւոր լինէի, և քեղ հետ հողին ձրինիկ՝ և հողն հողին աւանդ տայինք. դի այս է մարդոյն դարձն ու վախճանը. մարմինն՝ ի գերեզմանն, հողին առ Աստուած։ Այլ Ցիսուս զգերեզմանն ևս յանմահութիւն փոխեց. և երանի՛ որ այսպէս հաստատան։

Գուլխունճուգ, 29 մարտ 1875։

Վշտակից ընդ Ձեզ
ԽՐԻՄԵԱՆ ՀԱՑՐԻԿ

ՄԱՍՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ Ի ԶՄԻՒՐՆԻԱ Ի ՊԱՏԻՒ Ն. Բ. ԿԱԼԼԷՍԻ ԻՇԽԱՆԻ

Ապրիլ ամսոյ 16–28ին իրիկունը մեծ ու նշանաւոր արարողութիւն ու հանդէս տեղի ունեցաւ տեղւոյս մասօնական սրահին մէջ, ի ներկայութեան բազմաթիւ մասօն եղբարց, ի պատիւ Ն. Բ. Կալլէսի իշխան, Էտուարտ Ալպերթ, Անգղիոյ Մեծ Արևելքի ժողովարանին բարձրագոյն Պատկառելի ընտրուեալուն ու Մեծ վարպետի Աթոռը հաստատելուն առթիւ։ Այս հաստատութիւնն սոյն իրիկուն տեղի ունենալու էր յԱլպերթ Հօլ, ի Քէնսինկթըն, Լոնտոնի մէջ, ի ներկայութեան Անգղիոյ բոլոր երևելի Պատկառելի վարպետներուն, ուր 10,000էն աւելի բարձրաստիճան ոմնաղիրք

ներկայ ըլլալու էին։ Ահա այս հանդիսաւոր պարադային առթիւ՝ Մեծ Արևելքի իրաւասութեան տակ գտնուող ամէն աղգաց մասնաւորական ժողովարանները թէ՛ի Բրիտանիա և թէ օտար քաղաքներ սոյն արարողութիւնը պիտի կատարէին իրենց յատուկ տաճարներուն մէջ։

Հետևապէս և Զմիւռնիոյ մէջ՝ Անգղիական սահմանադրութեան տակ գտնուող չորս աղգաց, այսինքն Անգղիացւոց, Յունաց, Հայոց և Հրէից՝ անցեալ և ներկայ Պատկառելի վարպետներն և քոլոր անդամները միանալով ժողովարան բացին Անգղիարէն լեզուաւ, ա-ժառակալ ունենալով,

Ճօրճ Տ. Քանալէ. Ա. Պ. Վ. Վիլիամսոր ժողովարանէ և Եբելոֆեան Անգղիոյ մեծ Արևելքի, իբր Պատկառելի վարպետ։

Թ. Պօթըմլի. Ա. և Ն. Պ. Վ. Հօմըր ժողովարանէ, իբր Ա. Տեսուչ։

Ա. Կ. Տիտեան. Ա. և Ն. Պ. Վ. Տիգրան ժողովարանէ, իբր Բ. Տեսուչ։

Թ. Համըն. Ա. Պ. Վ. Հօմըր ժողովարանէ, իբր ներքին Պահապան։

Բ. Ղրիզորիատիս. Ն. Պ. Վ. Վիլիամսոր ժողովարանէ, իբր Առենադպիր։

Ե. Խաչան. Ն. Պ. Վ. Սիօն ժողովարանէ, իբր Առենադպիր։

Եւ ուրիշ վարպետներ, իբր Հոգաբար, Արարողապետ, Սարկաւագապետներ, և այլն, և այլն։

Օտար սահմանադրութեան տակ գտնուած հրաւիրելոց մէջ երևելիներն էին,

Տօքթօր Ա. Քրիքքա. 33. Մ. Պ. Ա. Վ. և Եբելոֆեան Իոպլէյ մեծ Արևելքի։

Տօքթօր Զ. Է. Քարէր 33. Ա. Պ. Վ.

Ս. Եանօփուլօ 30. Ա. Պ. Վ. Գինիչա ժողովարանէ։

Ընդարձակ սրահն շքեղութեամբ զարդարուած էր մրտենիներով ու Անդղիական և Օսմանեան դրօշակներով։ Մէջտեղ կառուցուած պատուանդանի մը վրայ կ'երևէր Ն. Բ. Կալլէսի իշխանի պատկերը։

Բոլոր հանդիսաւոր արարողութիւնները ըստ կանոնաց կատարեցին եւս, ժողովարանը դոցելէն առաջ, հանդիսիս՝ի հայկերոյթի հրաւիրեցան եղբարք։

Բոլոր հանդիսականք սիրով և ուրախութեամբ սեղանակից լինեցին եւս՝ երբ քաժակները լցան, բոլոր եղբարք ըստ կարգի, նախ՝ Օգոստափառ Սուլթան Ապտ-իւլ-Ազիզ Խանի կենաց համար դինի խմեցին չերմագին բարեմաղթութիւններ ընելով՝ որ Տիեզերաց Մեծ Հարտարապետն իրեն բարեկենդանութիւն պարգևէ՝ որ իր արքայական բարձր հովանւոյն ներքև սիրով ու միաբանութեամբ գործեն

ապա՝ երբ Ն. Բ. արքայազն Կալլէսի իշխանի կենդանութեանը խմելու կարգն եկաւ, Արքայական Կամարի անդամ Ե. վարդան Փափազեան, Նորին Բարձրութեան վրայ յօրինուած սիրուն եղանակաւ Հայերէն նուագ մը երգեց, զոր ինք շարադրեր ու խաղալ յօրիներ էր և որու հագնեցդն այնքան ներգաշնակաւոր երևցաւ բոլոր ազգային և օտար կոչնականաց որ ամէնք միկէն իրեն հետ զայն երգեցին, և ազաչեցին զինք որ նորէն երգէ: (Սոյն երգին օրինակը վերը կը դնենք) Բայց յայտմանէ՝ Եւրոպացի եղբարք ալ ուզեցին որ Անգլիարէնի թարգմանուի և Նորին Բարձրութեան Կալլէսի իշխանի դրուելու նամակին մէջ դրուի Հայերէն բնագրին հետ: Այս ալ չմոռնանք ըսելու որ սեղան նստելէն առաջ Ն. Բ. Մ. Պ. Վ. Կալլէսի իշխանի հետազրալուր քաշուած էր, որ Իզմիրի բոլոր Անգլիական տաճարներու օրհնապիրք կը շնորհաւորեն զինք և կենացը պինի կը խմեն:

Սեղանի վրայ զանազան ատենախօսութիւններէ հաք, զորս Պ. Պ. Վ. Վ. Բանալէ՝ Անգլիարէն լեզուաւ, Քրիքքա՝ Իտալերէն լեզուաւ, Քարէր՝ Գաղղիարէն լեզուաւ, Գրիզորիատի և Եանօփուլօ՝ Յունարէն լեզուաւ, Պ. Էֆէնտի Ճշմարտախօսեան՝ Տաճկերէն լեզուաւ և Ալիխարեան Հայերէն լեզուաւ ըրին, բոլոր եղբարք դարձեալ սիրով և միաբանութեամբ և հանդիսիւ դարձան՝ ի ժողովարան և զայն գոցելէն ու Աստուծոյ փառք տալէն ետք խաղաղութեամբ ու սիրով մեկնեցան:

Ա.ասիկ երգը:

Նոր պարտքով քաքէնշան
Ծոփէ այօր մեր ալեաքնի,
Զի Բրէնա պը Կալ օշոսպական
Բաղդի՝ ի գահ Բրիտանական:
Կեցցէ, կեցցէ, կեցցէ Բրէնա պը Կալ,
Կեցցէ, կեցցէ, կեցցէ Բրէնա պը Կալ.
Խմենք ընկեր Էդուարդ Բրէնա պը Կալի կենացը համար,
Խմենք ընկեր Բրէնա պը Կալի անդին կենացը համար:
Ընդհանրական եղբայրութեան
Ամենամեծ Գլխոյն կենաց
Ամեն պոճաքի մասօնական
Բարեմաղթա հանդիսական:
Կեցցէ, կեցցէ, կեցցէ, և այլն: Ա. Կ. Տ.

ՓՐԱՆՍԱ՝ վերջապէս քիչ մը շունչ կ'առնու և բոլորտիքը կ'նայի։ Կ'դադրին առ ժամս կրօսակցական կռիւները սահմանադրական օրինաց հաստատութեամբ։ Կառավարութիւնն բոլոր երկրին մէջ կը հռչակէ հասարակապետութեան հաստատութիւնն, և արդարութեան պաշտօնեայն՝ պ. Տիւֆօր շրջաբերականները կ'ուղղէ բոլոր ընդհանուր փոխանորդաց՝ պատուէր տալով որ սահմանադրական օրէնքն յարգել տան, հասարակապետութեան հակառակ դրուածներու վրայ հսկեն, և երկու տարիէ՝ ի վեր դատի և դատարման ներքև ընկած թերթերու վրայ տեղեկագրեն։ Սակայն զատկական օրերն բոլորովին անխառն չանցան։ Եւրոպա մեծ կորուստ մը կրեց. Էնկար Քինէ, երևելի արմատականն և մտաւորականն հոգին աւանդեց։ Պետական պատահարէն ետեւ՝ Էտ. Քինէ յաքսոր կ'ղրկուի, քանի տարի հայրենեաց ծոցէն հեռու մնալէն, և նշանաւոր երկասիրութիւններով իր հայրենասիրական և մտաւորական համբաւոյն մեծ փայլ բերելէն ետև՝ յետ անկման Նափօլէոնի՝ Ֆրանսա կ'մտնէ և ընտրիչ կ'ընտրուի։ Ազգային ժողովին մէջ՝ այն սակաւաթիւ ընտիր անդամներէն էր որ սկզբունքի համար կ'մաքառին միշտ և կէս որոշումներ, հաշտարար միջոցներ կ'անգոսնեն։ Ամբաւ բազմութիւն մ'իր յուղարկաւորութեան ներկայ կ'գտնուին և երևելին Վ. Հիւկօ դամբանական ճառ կ'խօսի, նոյնպէս Կանսէդա, որու վերջին երկդիմի ընթացքն անվստահութիւն ազդեր էր մեծ մարդուն։ ԳԵՐՄԱՆԻԱ դեռ իր հաշիւը չյոդեց կղերին հետ, որու ըմբոստութեան նոր նոր օրինօք կ'պատասխանէ։ Պրէսլաւի եպիսկոպոսը միայն կը յանդգնի պապական կոնդակը հրատարակել, և անմիջապէս պաշտօնէն հրաժարելու կ'հրաւիրուի կառավարութեան կողմէ՝ որ մտադիր է փակել տալ այն ամէն վանքերն որ ժէզուիթներու հետ յարաբերութիւն ունին։ Նոր վիճակագրի մը համեմատ՝ Գերմանիոյ մէջ այժմ 1,008 վանական հաստատութիւններ կան կանանց, ուր 8,000 մոնաստ կ'պարունակեն. կան նաև 140 մենաստան, որ 1,000 անդամ ունին, որոց մէկ մասը միայն հիւանդաց խնամատարութեամբ կ'պարապին։ Այս վանուց մեծ մասը բառնալու համար նոր օրէնք մը կ'պատրաստուի, մինչդեռ Փուլտայի մէջ դումարուած եպիսկոպոսաց ժողովն բոլորքաիր մ'ուղղելով առ կայսրն՝ կ'պնդէ թէ չէ կարող նոր օրինաց հպատակիլ, և խղճի մտօք յայտարարել թէ պետու-

թեան կ'հպատակի քան թէ Պասլին, և կ'խնդրէ որ Կայսրն իր հաւանութիւնը չտայ նոր օրէնքին: Բայց պաշտօնէութիւնն արթուն կը հսկէ, և Կայսրն անոր համամիտ կ'գտնուի: Ա՛յս բաւական չէ, կաթոլիկաց մասին որ և է համակրութիւն կառավարութեան կասկածներ կ'ազդէ: Պիսմարգ իշխանին յանդիմանութեան գիրն ու Պելժիոյ կառավարութիւնն սկսի մը պատերազմական յայտարարութիւն կ'համարուի և մտքերը կ'յուզէ: Պելժիոյ մամլոյն համակրական ցոյցերն Գերմանիոյ կաթոլիկաց 'ի նպաստ՝ Պիսմարգ իշխանին ցասումը կ'գրգռէ և Պելժիոյ մէջ լարուած դաւերն իր կենաց դէմ, ուղղուած գիրերն ու ըմբոստ եպիսկոպոսս յիշելով՝ իր յայտարրին մէջ՝ կ'հրաւիրէ Պելժիոյ կառավարութիւնն որ այս ընթացից ետևձ դնէ: Պելժիա՝ Զուիսերիի օրինակին պատրի հետևիլ, կ'ըսէ, և Սահմանադրութիւնը վերաքննել, և կ'յաւելու. — Եթէ չէզոք տէրութիւններն իրենց կայութեան օգուտները քաղել կ'փափաքին, պարտաւոր են այս չէզոքութեան սկզբունքն այլայլելէն զգուշանալ, որ իրենց էութեան հիմն է: — Պելժիոյ կառավարութիւնն այս յայտագրին դէմ կ'բողոքէ, թէ ակնարկեալ դաւերն հին բաներ, և ոմանք քննութեան ներքև են, թէ Պելժիքական օրէնքը բաւական է թշնամանքը զսպելու, թէ միշտ ազատութիւնն կարգ կանոնի հետ կ'պահէ, և թէ վերջապես անկախ և չէզոք Պելժիա երբէք իր անկախութիւնն ապահովող ազգի մը հետ ունեցած բարեկամական յարաբերութիւնները վրդովելու ընթացք մ'ունեցած չէ: Գերմանիա այս պատասխանին վրայ լռութիւն կ'պահէ, միւս տէրութեանց կը հաղորդէ իր բանակցութեանց արդիւնքն, իմացընելով որ Տիւշէնի դործին, այս է Պիսմարգի կենաց դէմ եղած դաւաճանութեան քննութեան՝ պիտի սպասէ: Ա՛յս գործն՝ Անկլիական լրագրի մ'բաժին պէս՝ կ'յիշեցընէ Գայլին և Գաւնուկին առակը: Սակայն միւս կողմէ պատերազմական շշուկներ և կէս-պաշտօնական գրուածներ հասարակաց կարծիքը կ'բորբոքեն, մինչև որ Հէ-նայէն Գերմանիա լրագրին մէկ յօդուածը կասկածները կ'փարատէ և միջազգային յարաբերութիւնները. պատերազմի երկիւղ չեն կրնար ազդել, կ'ըսէ: Ա՛յս իրաւ է որ Գերմանիա ծուռ աչօք կ'նայի Ֆրանսայի զինուորական կազմակերպութեանն ու պատրաստութեանց, և Աւստրիոյ ու Իտալիոյ մէջ դաշնի համաձայնութիւն մը նշմարելով Պիզմարգ իշխանն ուղեց զգացընել անոնց թէ ինք արթուն է և 'ի հարկին գործելու պատրաստ: ՍՊԱՆՈՒՈՑ գործերը միշտ ձախող վիճակի մէջ

են : Տօն Պարլօս մերթ կ'յաղթէ մերթ կ'յաղթուի և իր դրից մէջ անյողդողդ կ'մնայ , թէև կ'ըսուի թէ Քապրերա զօրապետին դրաւոր հրաւէրին վրայ՝ Ալֆօնս թագաւորին միանալու և հաշտուելու մասին , Տօն Պարլօսի բանակին մէջ դասալիքները կ'աւելնան : Թագաւորն արքայական կարգ ու սորգը վերահաստատելու կ'ձգնի . ազնուականներն արքունիքը կ'յաճախեն , ժողովուրդը փոքր առ փոքր կղերին լծին ներքև սլիտի դրուի : Համալսարաններուն ուսուցիչներն յեղափոխութենէ առաջ իրենց ունեցած պաշտօնին մէջ կ'հաստատուին : Այս տնօրէնութենէ մեծ յուզմունք կ'ծագի : Գրեթէ բոլոր ուսուցչաց դասը կ'բողքէն հասարակաց կրթութեան մասին տեսնուած յետադիմական որոշումներուն դէմ , մինչդեռ ուսանողներն ալ կ'պատրաստուին իրենց դժգոհութիւնը յայտնելու . բայց կառավարութիւնն այս ըմբոստութիւնը ղսպելու միջոցներ ձեռք կ'առնու և արդէն հաստատեալ բողոքարկու ուսուցիչ ծիներ յաջսոր կ'ղրկուի : Հաւանական է որ այս խնդիրն դահլիճը կործանէ : ԻՏԱԼԻՈՑ Թագաւորն Աւստրիոյ Կայսրը կ'ընդունի Վենետկի մէջ . շքեղ հանդէսներ կը տրուին ի պատիւ կայսերական հիւրին որու նախորդներն երբեմն ղիտալիան կ'ձնշէին : Երկու վեհապետներն իրենց արտաքին գործոց պաշտօնէից միջոցաւ առևտրական դաշնադրութիւն մը հաստատեր և կ'ըսուի թէ Ս. Պապին ներկայ և ապագայ կացութեան , միւս տէրութեանց հետ ունեցած յարաբերութեանց և իր յաջորդին ընտրութեան խնդիրներն բանակցութեան դլխաւոր կէտերն եղեր են : Սակայն Պապն քնաւ կարևորութիւն չտար քաղաքագէտներու ընթացքին և երեք դլխաւոր պաշտօն ունի . կոնդակներով կաթոլիկները դրդռել կառավարութեանց դէմ , բանադրել , և կարծինալներ շինել : Անկլիացի երևելի Մանինկ եպիսկոպոսն ալ կարծինալ կ'լինի : Մինչ յարդ Պիոս Թ. իննսուն իննն կարծինալ շինած է , որոց մէջ Անդոնէլլի ամենէն ծերն է , և որոց յիսունը մեռած են : Իսկ Պապին դահակալութիւնը սեռնող վաթսուն չորս կարծինալէ ութ հոդի միայն կեն-դանի են , որոց ամենէն ծերն է կարծինալ Անժէլիս , որ 1793ին ծնած է և Պապէն չորս տարու մեծ է : Նոր պապական կոնդակ մը կ'դատապարտէ Հէկլէկտիոյ հին կաթոլիկներն և անոր կառավարութիւնը կ'նշանակէ : Հետզհետէ կ'հաստատուի այն լուրը թէ Պիսմարդ իշխանը խնդրած լինի Իտալիոյ կառավարութենէ որ Պապին կացութիւնն լաւ ևս որոշելու համար կազմուելիք դեսպանաժողովի մը ժամանակից գտնուի :

Օդաչէն ամենէն երկարաձգ ուղեւորութիւնը. Զօդքէական օդաչէն նաւարկութեան ընկերութիւնն որոշած լինելով դիշերային օդապարով քանի մը օդերևոյթական և էլէկտրական դիտողութիւններ ընել, Ջէնկ օդապարիկն՝ որ հինգ հոգի կ'պարունակէր՝ Բարիզէն ելաւ և 23 ժամէն Պօրտօ հասաւ: Ուղեւորութեան առեն քանի մը կարևոր դիւտեր եղան: Երբ օդաշրջիկներն Լանդի վրայ կ'սաւառնէին, տարբեր ուղղութեամբ երկու օդի յորձանքի հանդիպեցան: Աւելի բարձր ելնելով տաք հով մ'օդապարիկը մղեց դէպ 'ի Ռվիհանոս, իսկ աւելի վար իջնելով՝ գրեթէ երկրէն հարիւր կանգուն (շուրջ 300 ոտք) հեռու զով քամի մը նորէն ցամաքի վրայ քշեց օդապարիկը: Դիշերային պայծառ լուսնկայ մը լինելով՝ կարող եղան օդաշրջիկներն երկիրը տեսնել, և կէս գիշեր հինգ անցած՝ լուսինն շքեղ խաչաձև բակով մը կ'շրջապատի: Օդապարիկն ծիրօնտ գետին վրայէն 35 վայրկենէ կ'անցնի, և չորս աղաւնի կ'արձակէ, որոց և ոչ մին կ'հասնի: Ագլանդեան ովկիանոսէն անցնելու փորձ մը պիտի լինի աշնան մէջ:

Էբէլ ս'ընդրեւ. Ամենայն մ'իր աղջիկը պիտի կարդէր, բայց երկբայութեան մէջ էր ընտրութիւն մ'ընելու: «Միթէ արժանեաց տէր այլ չունենար մարդու մը տասաղջիկս, կ'ըսէր, թէ ոչ հարուստ մարդու մը, զուրկ ուրիշ բարեմասնութենէ»: Չկրնալով որոշում մ'ընել՝ դնաց Թեմիսդոկլի խորհուրդ հարցնելու այս մասին: «Ես իմ աղջիկս կ'տայի, ըսաւ Թեմիսդոկլ, առանց ստակի մարդու մը քան թէ առանց մարդու ստակի»:

Զոֆէ պոռբս խելացի Ռոբան-Կոպան մը. Ա.յս կասիկն նոր հասաւ Բարիզի Բուսաբանական Պարտէզին: Էգ է ծօտօ ըսուած տեսակէն, և դպրոցէն նոր ելնող աղջկան մը կ'նմանի: Վրան վերարկու մ'ունի, և երբ օտարականներ տեսնէ՝ պատկառելով իր ոտները կ'ծածկէ: Սեղան կ'նստի շիտակ և ձաշ կ'ընէ, թէև՝ փոքր տղու պէս՝ իր անձեռոցին հետ կ'խաղայ: Միշտ շէնքով շնորհքով և կանացի մարդավարութեամբ կ'վարուի: Իր յատուկ անկողնին ունի, ուր կ'պառկի սպիտակ սաւանի վրայ և վերմակի տակ, ձեռներն՝ դրսէն պահպանելու համար՝ ծածկոցին ներքև դնելով:

Խմբագիր-Տնօրէն Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Արևելեան Մամլոյ տարեկան գինն է կանխիկ Ձմիւռնի համար չորս, իսկ օտար երկրի համար հինգ մէճիտիէ։

Խմբագրութեան վերաբերեալ ամեն նամակ, ձեւափոխը պէտք է ուղղել առ խմբագիրը — անօրէն Մ. Մամուրեան, փոքր վէղիր խան, թիւ 65։

Անվճար նամակ կամ ծրար չընդունուիր։

Բաժանորդ գրուիլ ուզողը կրնայ դիմել առ

Մեծ. ՍՏԵՓԱՆ Յ. ՏԷՏԷԵԱՆ Ձմիւռնիա

» ԿԱՐԱՊԵՏ ՆԱՋՄԱՃԵԱՆ Կ. Պօլիս, Գաշըպճը խան, թիւ 4

» ԽՈՍՐՈՎ ԷՍԿԻՃԵԱՆ Տիվրիկիա

» Ս. ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆՑ Կարին

Արժ. ՄԵԼՔԻՍԵԹԵԿ Վ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ Երուսաղէմ